



*Միացեալ այս թիւին նուէրը ընթերցողներուն՝
Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու որմագիր:*

ՄԻԱՅԵԱԿ ԱՅՍ ԹԻԻԸ

■ Խմբագրական	2
■ Ողջոյնի Խօսքեր	4
■ Օրհնութեան Խօսքեր	6
■ Պատգամ	8
■ Անդրադարձ	10
■ Տեսակցութիւններ	23
■ Մամլոյ Ասուլիս	25
■ Հաւաքներ	26
■ Բացումը	30
■ Լաւագոյնները	42
■ Փակումը	46
■ Յաղթանակի Պարահանդէսը	52
■ Յարգանքի Տուրք	56
■ Ֆութպոլ	60
■ Պասքեթպոլ	90
■ Վոլիպոլ	116
■ Թենիս	118
■ Ճատրակ	120
■ Փինկ-Փոնկ	124
■ Լող	126
■ Աթլէթ	130
■ Լուսանկարչական Անդրադարձ	138



Մարզական ամսաթերթ
Հրատարակութիւն՝ Հ.Ս.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

32ՐԴ ՏԱՐԻ, 2013, ԹԻԻ 5-8 (371-374)

ԽՄԲԱԳԻՐ
Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Սեդա Պէշլեան (Լիբանան),
Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Մարօ Քէշիշեան (Արեւմտեան Մ.
Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
(Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
Պատրիկ Կիւլպէնկեան
Գրիգորիս Պողարեան
Աբօ Մոսիկեան

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ալպերթօ Մ. Սորէեանի եւ Գաբրիէլ
Փանոսեանի, որոնք իրենց
լուսանկարներով օժանդակեցին
այս թիւին պատպաստութեան:

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure Paklayan
Կողբեր - Որմազդ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
Պուրժ Համուտ, Ճինիշեանի Թաղ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 01/248043, Fax: 01/260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«Մարզիկ» ի տարեկան
բաժանորդագրութեան սակեր՝
Լիբանան 48,000 լ.ո.
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա՝ \$75



ՄԱԿԵՆՔԱՆԵՐԻ
ԵՎ ԺՐՈՂԱՅԻՆՆԵՐԻ
ՄԱՐԳԱԽԱՂԵՐԷՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՆՈՐ ՄԵԿՆԱԿԷՏ

Մարզական մեր կեանքը չի կրնար համա-Յ.Ս.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերեն ետք ըլլալ այն՝ ինչ որ էր մարզախաղերեն առաջ: Մարզախաղերը իրագործում մը եղան միութեան 95-ամեայ կեանքին մէջ եւ մեկնակէտը հանդիսացան ապագայի նոր իրագործումներու:

Համա-Յ.Ս.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը հանդիսացան Յ.Ս.Ը.Մ.ի պատմութեան մեծագոյն մարզախաղերը, որոնք լուրջ փորձաքարի ենթարկեցին միութեան կազմակերպական, ֆինանսական ու մարզական ամբողջ կարողականութիւնը: Փորձաքարը պատուով յաղթահարելը միութեան հաշուոյն բարենիշ մըն էր, բայց նաեւ պարտաւորեցնող հանգամանք՝ յառաջիկային կազմակերպելու նոյնքան եւ աւելի լաւ մարզախաղեր:

Իրագործուած յաջողութենէն ետդարձ կատարելը կարելի չէ: Բոլորը գնահատեցին Յ.Ս.Ը.Մ.ը: Քաղաքական թէ կրօնական բարձրաստիճան պատասխանատուներ, հայրենի թէ ըսփիւռքեան հեղինակաւոր կազմակերպութիւններ համա-Յ.Ս.Ը.Մ.ական մարզախաղերուն մէջ տեսան սեփական ժողովորդին ազգային կորովը բարձր պահող, ազգային միասնականութեան ոգին ամրապնդող նախաձեռնութիւնը: Համա-Յ.Ս.Ը.Մ.ական մարզախաղերը դարձան «հայկական աշխարհի կառուցման շաղախը», հաւաքական մեր ուժի կերտման ցուցանիշը:

Համա-Յ.Ս.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերով հայրենիքը վերարժեւորեց հայ մարզական մեծագոյն շարժումը, երբ տասնամեակներու ուրացումէ եւ անտեսումէ ետք՝ Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէն, յանձինն իր նախագահին, հովանաւորեց մարզախաղերը, բարոյական ուշացած պարտք մը հատուցելով անոր նկատմամբ: «Ուշ, բայց ոչ ուշացած» այս քայլը, անկասկած, նոր թափ տուաւ Հայաստանի մէջ մարզական կեանք ծաւալելու Յ.Ս.Ը.Մ.ի ծրագիրներուն:

Արդարեւ, համա-Յ.Ս.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը առիթ մը եղան, որ Յ.Ս.Ը.Մ.ի հայրենի կառոյցը հանդէս գայ մարզական սիրողական խումբերով: 1990-ականներու սկիզբը ֆութպոլի խումբ մը պահելու ճիգերը կը բախէին անյաղթահարելի դժուարութիւններու: Այժմ նոր «ձեռնոց» կը նետուէր միութեան՝ միաժամանակ պասքէթպոլի եւ վոլիպոլի խումբեր ունենալու, ճատրակ, փինկ-փոնկ, աթլէթ եւ լող կիրարկելու: «Ձեռնոց»ը վերցուցաւ յանդգնօրէն, գործին կարելորութեան եւ դժուարութեան ամբողջական գիտակցութեամբ:

Սփիւռքեան կողմնաշխարհի, համա-Յ.Ս.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը լաւ վկայութիւն մը տուին մարզական ներքին կեանքի գրաւչութեան եւ յաջողութեան մասին, բոլորին յուշելով, որ Յ.Ս.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային ճակատումները կրնան նոյնքան եւ աւելի գրաւիչ ըլլալ՝ որքան անհաշիւ գումար-

“ *Հիներուն համոզումը, նորերուն յանդգնութիւնը, հաւաքքն ու զիտակցութիւնը միայն 95-ամեայ այս միութիւնը կրնան ամուր պահել եւ նորանոր յաջողութիւններու առաջնորդել:* ”



ներ մսխելու գնով՝ կարգ մը շրջաններու մէջ կատարուող տեղական մրցակցութիւնները օտար խումբերու դէմ, շատ յաճախ օտար մարզիկներով: Ժամանակն է ուրեմն, եթէ անցած չէ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու փորձառութեան լոյսին տակ, մտածելու մարզական մեր շարժումը աւելի շատ կեդրոնացնելու ներքին մրցաշարքերու վրայ՝ քան խելայեղ մրցակցութեամբ տարուող ախոյեանական անհասանելի տիտղոսներու վրայ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը յիշեցին եւ նորահաս սերունդին յիշեցուցին, որ Հ.Մ.Ը.Մ. անցնող 95 տարիներուն ունեցած է տիպար մարզիկներ, հաւատաւոր դէմքեր, որոնց յիշատակը վառ պահելու լաւագոյն ձեւը անոնց նման ազնիւ պայքարի եւ արդար մրցակցութեան ախոյեաններ ըլլալն է, անոնց ազգային-միութենական ուղիով ընթանալն է: Յովհաննէս Շահինեանէն մինչեւ Վարդգէս Տէր Կարապետեան, Տոքթ. Միսաք Արզումանեանէն մինչեւ Երուանդ Տէմիրձեան եւ տեսլականի ու նուիրումի այլ առաքելներ հանուր հայութեան փոխանցե-

ցին այն համոզումը, թէ՛

Հաւատքի եւ գիտակցութեան վրայ հիմնուած այս միութիւնը այլ ընտրանք չունի միութիւն մնալու համար: Կա՛մ կը կառչի իր արժէքներուն կամ կը մղուի այլասերումի եւ դասալքումի: Հ.Մ.Ը.Մ.ի նման հոյակապ «մարզական բանակ» ունեցող միութիւն մը, որ կենարար շարժում է, հայաշունչ մթնոլորտ եւ խանդավառութիւն, չի կրնար իր երթը շարունակել առանց իր ազգային-բարոյական սկզբունքներուն եւ միութենական այն արժէքներուն, որոնք արժանի կը դարձնեն զինք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն կոչումին:

Հիներուն համոզումը, նորերուն յանդգնութիւնը, հաւատքն ու գիտակցութիւնը միայն 95-ամեայ այս միութիւնը կրնան ամուր պահել եւ նորանոր յաջողութիւններու առաջնորդել՝

Ի շահ՝ հայ մարզական շարժումի տեւական վերելքին,

Ի խնդիր՝ ազգակերտման ու ազգապահպանման մեր վեհ նպատակին:

“

Հաւատքի եւ գիտակցութեան վրայ հիմնուած այս միութիւնը այլ ընտրանք չունի միութիւն մնալու համար: Կա՛մ կը կառչի իր արժէքներուն կամ կը մղուի այլասերումի եւ դասալքումի:

”

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 9-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ,

Հաճոյքով եմ վերյիշում չորս տարի առաջ երեւանում կայացած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 8-րդ մարզախաղերը: Դրանք բացառիկ էին, քանի որ միութեան պատմութեան մէջ առաջին անգամ տեղի էին ունենում մայր Հայաստանում:

Աշխարհասփիռ ձեր կառոյցը խորապէս հայկական է, եւ անգամ 1921 թուականին նրա ընդհատուած երթը միութեան թուլացման պատճառ չդարձաւ: Ընդհակառակը, այն աւելի յամառօրէն եւ անմնացորդ նուիրումով սերունդէ-սերունդ փոխանցեց անկախ Հայաստանի տեսլականն ու առաջին իսկ առիթով նորից ծլարձակեց հայրենիքում:

«Բարձրացի՛ր-բարձրացուր»ը, Հ.Մ.Ը.Մ.ականի համար երբեք սոսկ կարգախօս չմնաց: Այն ներառեց մի ամբողջ գաղափարախօսութիւն, որի շուրջ համախմբուած մեր եղբայրներն ու քոյրերը կերտեցին վերապրած հային, նորացուած հայրենիքի քաղաքացուն:

Ջերմօրէն ողջունում եմ ձեր որոշումը Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը կրկին մայր Հայաստանում անցկացնելու վերաբերեալ: Մաղթում եմ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական շունչը Կոմիտասեան կոունկի պէս հասնի աշխարհի չորս կողմերը եւ մեր քոյրերին ու եղբայրներին փոխանցի Հայաստան աշխարհի խապրիկը: Փոխանցի եւ վստահեցնի, որ Հայաստանն այլեւս հզօր է, որ ոտքի վրայ ամուր կանգնած է, քանի որ Հայաստանն ու Սփիւռքը մէկ ամբողջականութիւն են:

Կրկին ողջունում եմ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիռ կառոյցին, 9-րդ մարզախաղերի մասնակիցներին եւ ասում. «Բարով էք եկել հայրենիք»:



ՍԵՐժ ՍԱՐԳՍԵԱՆ
Շ. Շ. Նախագահ



Հ.Մ.Ը.Մ.ի երբեմնի միջմասնաճիւղային խաղերուն (Հալէպ, Պէյրուժ, Գահիրէ) մթնոլորտը վերակենդանացնող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը ունին 32 տարուան պատմութիւն:

1981-էն մինչեւ օրս կազմակերպուած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական ինը մարզախաղեր Գանատայի (Մոնթրէալ, Թորոնթօ), Արեւմտեան Մ. Նահանգներու (Լոս Անճելըս), Ֆրանսայի (Վալանս), Արեւելեան Մ. Նահանգներու (Ուաշինկթըն, Նիւ Ճըրզի), Լիբանանի (Պէյրուժ), Յունաստանի (Աթէնք) եւ Հայաստանի մէջ (Երեւան, Արտաշատ): Գանատա եւ Հայաստան երկուքական անգամ հիւրընկալած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր:

Սկզբնական շրջանին, մարզախաղերը յատկացուած են մէկ մարզախաղի՝ պասթեթպոլի (1981, 1990) կամ ֆուլթպոլի (1985, 1993): 1993-էն սկսեալ,



Իւրաքանչիւր մարզախաղի հետ որդեգրուած է նաեւ երկրորդ մը՝ աթլետիկ (1993-ին, Ֆուլթայոլի հետ) եւ վոլիպոլ (1997-ին, Ֆուլթայոլի հետ):

2001-ի 6-րդ մարզախաղերը Ֆուլթայոլի եւ աթլետիկ մի հետ առաջին անգամ ըլլալով որդեգրած են փինկ-փոնկը, իսկ 2005-ի 7-րդ մարզախաղերը՝ պասքեթպոլի եւ վոլիպոլի հետ լողը:

8-րդ եւ 9-րդ մարզախաղերը որդեգրած են նոր մարզախաղեր՝ ճատրակ (2009) եւ թենիս (2013): Այսպէս, 2009-ի 8-րդ մարզախաղերը ընդգրկած են Ֆուլթայոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ, ճատրակ եւ լող: Իսկ վերջին՝ 9-րդ մարզախաղերը յայտագրի վրայ ունեցան ութ մարզախաղեր. Ֆուլթայոլ, պասքեթպոլ (կրտսեր, երէց), վոլիպոլ (աղջիկներ), փինկ-փոնկ, թենիս, ճատրակ, լող եւ աթլետիկ:

Մասնակցութեան պատկերը եւս փոփոխութիւն կրած է համա-Հ.Մ.Ը.Մ.-ական մարզախաղէ մարզախաղ, յատ-

32 ՏԱՐՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

կապէս վերջին տասնամեակին արձանագրելով մասնակից շրջաններու թիւի աճ:

Արդարեւ, առաջին մարզախաղերուն մասնակցած են 8 շրջաններ (1981), 2-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ (1985), 3-րդ մարզախաղերուն՝ 9 շրջաններ (1990), 4-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ (1993), 5-րդ մարզախաղերուն՝ 9 շրջաններ (1997), 6-րդ մարզախաղերուն՝ 10 շրջաններ (2001), 7-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2005), 8-րդ մարզախաղերուն՝ 14 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2009), իսկ վերջին 9-րդ մարզախաղերուն՝ 16 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2013):



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Երեւանում Յուլիս 27-ից Օգոստոսի 3-ը Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 9-րդ մարզախաղերի անցկացման առիթով:



Ուրախութիւն է Հայրապետիս համար տեսնել, որ Միութիւնը՝ ի դէմս Կեդրոնական Վարչութեան, իր ազնիւ առաքելութեանը հաւատարիմ, մարզական խաղերի միջոցով շարունակում է գնահատելի ջանքեր բերել աշխարհասփիռ հայորդեաց կեանքի առաւել առողջ եւ ամուր ապագայի համար:

Անտարակոյս է, որ Երեւանում կայանալիք խաղերը բացի մարզական օգտակարութիւնից նաեւ լաւ առիթ պիտի լինեն տարբեր երկրների մեր զաւակների միջեւ մտերիմ ու ջերմ փոխ յարաբերութիւնների հաստատման, ինչպէս եւ հայրերի երկրի պատմամշակութային եւ հոգեւոր արժէքների հետ ծանօթանալու եւ հայրենի աւանդած ժառանգութեանը հաղորդակից դառնալու համար:

Հայրապետական մեր գնահատանքն ենք բերում Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներին, բոլոր կազմակերպիչներին, աջակիցներին ու սիրելի մասնակիցներին եւ մաղթում ենք, որ Ամենակարողն Աստուած բազմապատկի Ձեր ջանքերը բոլոր ուժ ու եռանդ պարգեւելով նորանոր յաղթանակների ձեռքբերման համար:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան Ամէն:

Օրհնութեամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 9-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ, 27 ՅՈՒԼԻՍԷՆ 3 ՕԳՈՍՏՈՍ 2013 ԵՐԵՒԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնէական ջերմ սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը: Հոգեկան անհուն գոհունակութեամբ իմացանք, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր մարզախաղերը տեղի պիտի ունենան 27 Յուլիսէն 3 Օգոստոս 2013, Երեւանի մէջ: Արդարեւ, ինչ գօտեպնդիչ երեւոյթ է ու գնահատելի նախաձեռնութիւն տեսնել Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի անդամները հաւաքուած Հայաստանի սիրտը հանդիսացող Երեւանի մէջ: Այս նախաձեռնութեան մէջ Մենք կը տեսնենք երեք յատկանշական երեւոյթներ.-



Առաջին, Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի որ անկիւնն ալ հաստատուած ըլլայ, մէկ ու անբաժանելի ընտանիք է: Այսպէ՛ս եղած է ան իր ծնունդով, իր առաքելութեամբ ու գաղափարաբանութեամբ: Նման հաւաքներ վստահաբար իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի մօտ պիտի վերաշեշտեն նոյն ընտանիքին իր ամուր պատկանելիութիւնը եւ այդ պատկանելիութեան խոր գիտակցութենէն եկող իր պարտաւորութիւնը:

Երկրորդ, նման հաւաքներ վերյիշեցում մը պէտք է դառնան Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր անդամներուն, բարեկամներուն ու բարերարներուն, որ մարմնակրթական այս միութիւնը սոսկ փառաւոր անցեալ մը չէ, այլ ապրող, գործող ու ծառայող ներկայութիւն է ան մեր ժողովուրդի համայնական կեանքէն ներս իր մարդակերտումի ու հայակերտումի առաքելութեամբ:

Երրորդ, նման հաւաքներու կայացումը Հայաստանի մէջ պերձախօս վկայութիւն մըն է հայ մարդու անխախտ հաւատքին թէ՛ Հայաստանը ամբողջ հայութեան հայրենիքն է եւ իւրաքանչիւր հայ Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ ա՛յս գիտակցութեամբ պէտք է մասնակից դառնայ հայրենաշինութեան նուիրական գործին:

Մեր սպասումն է որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ներկայ մարզախաղերէն եկող այս երեք պատգամները արձագանգեն իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի կեանքին մէջ:

Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր պատասխանատուներուն ու բոլոր անդամներուն: Մեր աղօթքն է որ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ մնայ զօրեղ ու հաւատարիմ «Բարձրացի՛ր-բարձրացուր» իր նշանաբանին:

Հայրական սիրով,

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌ-ԱՅԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԵԱՄԲ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ 9-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆ, «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿ)

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հերթական մարզախաղերը ընթացք կ'առնեն անկախ հայրենիքի Եռագոյն դրօշին ներքին: Մարզախաղերու պատմութեան մէջ այս արդէն իններորդ խաղերն են, որոնք տեղի կ'ունենան Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ: Առաջին եօթը մարզախաղերը, չորս տարուան յաջորդականութեամբ, կատարուած են սփիւռքեան ոստաններու մէջ: Ութերորդ մարզախաղերը, 2009-ին, առաջին անգամ ըլլալով տեղի ունեցան Հայաստանի մէջ: Իսկ այս մարզախաղերը արդէն կը նշեն գագաթնակէտ մը միութեան մարզական պատմութեան մէջ:

Արդարեւ, այս մարզախաղերուն մասնակցութեան պատկերը աննախընթաց է թէ՛ մասնակից երկիրներու եւ թէ՛ մարզիկ-մարզիկուհիներու թիւով: Աննախընթաց է նաեւ անոր համար, որ ան առաջին անգամ ըլլալով կը վայելէ հայրենի պետութեան հոգածութիւնն ու գուրգուրանքը, որուն հա-

“ 95 տարի շարունակ, Հ.Մ.Ը.Մ. քով-քովի բերած է հայ երիտասարդութեան խանդավառ շարքերը, անոնց ջամբելով այն բոլոր արժէքները, որոնք կը կերպեն օրինաւոր քաղաքացին, քիպար մարդն ու հայը: ”

լաւագոյնս կը նպաստէ Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման ու զարգացման, ի շահ մեր նորահաս երիտասարդութեան առողջ կազմաւորման, ի սպաս մեր վաղուան պայծառ գալիքին:

Այսօր, այստեղ կը պարգուի մանրանկար մէկ պատկերը Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան աշխարհասփիւռ գործունէութեան: Մարզախաղերու եւ սկստական շարժումի ճամբով ծաւալած այդ շարժումը ունի 95 տար-

մար մեծապէս շնորհակալ է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը: Ծնորհակալ է, որ այս մարզախաղերուն առիթով ըՍփիւռքի նախարարութեան կողմէ ստեղծուած է յատուկ յանձնաժողով՝ մարզախաղերուն օժանդակելու նպատակով: Ծնորհակալ է մանաւանդ մարզախաղերուն առիթով Հայաստանի Ողիմպիական Կոմիտէին ցուցաբերած սերտ գործակցութեան համար, ինչ որ



լան պատմական փորձառութիւն՝ սերընդակերտումի եւ հայակերտումի աշխատանքներուն մէջ: 95 տարի շարունակ, Հ.Մ.Ը.Մ. քով-քովի բերած է հայ երիտասարդութեան խանդավառ շարքերը, անոնց ջամբելով այն բոլոր արժէքները, որոնք կը կերտեն օրինաւոր քաղաքացին, տիպար մարդն ու հայը: Այս եւ նման մարզախաղերը միջոցներ են հասնելու այդ նպատակին, որուն իրագործման լծուած են այսօր աշխարհի 105 քաղաքներու մէջ գործող միութեան աւելի քան 25 հազար անդամները:

“ Այս երիտասարդութիւնը պիտի ճանչնայ ու սիրէ իր հայրենիքը, որուն ծառայելու պատրաստակամութեամբ կը դաստիարակուի ան միութեան շարքերուն մէջ: ”

Յարգելի՛ ներկաներ, Այսօր, մարզական տօնահանդէս է մեզի համար: Բացման այս հանդիսութեամբ ազդանշանը կը տրուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ մարզախաղերուն, որոնք ազնիւ մրցակցութեան եւ արդար խաղի բեմը պիտի ունենան յաղթող-պարտուողներ, սակայն մեծագոյն յաղթականը, անկասկած, պիտի ըլլայ Հայաստանը, որ 8 օրեր շարունակ իր գիրկը պիտի բանայ մեր մարզական «կամաւոր բանակ»ին: Ուրեմն, Յառաջ անասան, յառաջ անդեղեւ, դէպի յաղթանակ:



Այս եւ նման մարզախաղերը առիթներ են մեր երիտասարդութեան համախմբման եւ ազգային ոգեւորութեան ստեղծման համար: Բան մը, որուն այնքան պէտք ունի մեր ժողովուրդը: Այս հոյակապ երիտասարդութիւնը եռանդ եւ յոյս պիտի ներշնչէ մեր ժողովուրդին, իր կարգին, ազգային շունչ եւ ոգի ստանալով անկէ: Այս երիտասարդութիւնը պիտի ճանչնայ ու սիրէ իր հայրենիքը, որուն ծառայելու պատրաստակամութեամբ կը դաստիարակուի ան միութեան շարքերուն մէջ:





ՄԱՐԶԱԽԱՂԵՐԷՆ ԱՆԴԻՆ՝ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ՈՒ ՊԱՏԳԱՄՆԵՐ

Մ. Շիմշիրեան
ՊԵՅՐՈՒԹ

Գեղեցիկ գուգադիպուկեամբ մը, համա-Հ.Մ.-Լ.Մ.ական 9-րդ մարզախաղերը տեղի ունեցան միութեան 95-ամեակի տօնակատարութիւններու միջոցով մէջ, սօնը վերածելով երկուքի, ուրախութիւնը՝ կրկնակի: Տօն կ'ըսենք, որովհետեւ միութեան արդի պատմութեան մարզական մեծագոյն իրադարձութիւնն էր, որ անցնող ամառ մեծ յաջողութեամբ իրագործուեցաւ Հայաստանի մէջ, մասնակցութեամբ 653 մարզիկներու, մարզիչներու եւ անոնց ընկերակցող աւելի քան 300 ծնողներու եւ բարեկամներու:

“ Մեր արմատներուն կառչելու եւ մեր ինքնութեան եւ արժէքներուն փերը ըլլալու լաւագոյն դասն էր, գոր ջահապառութեան ճամբով, Հ.Մ.-Լ.Մ.ի միջոցով, փոխանցուեցաւ համա-Հ.Մ.-Լ.Մ.ական մարզախաղերու մասնակիցներուն:

”

Տօնակա միջոցով տեղի տրուեցաւ մէջ: Հոն էին միութեան 16 շրջաններէն եւ Թեհրանի Հ.Մ.-Ա.Կ-էն մարզական ներկայացուցիչները: Հոն էին Հ.Մ.-Լ.Մ.ական մարզական պատասխանատուներ, իրաւաբարներ, մարզական կեդրոնական յանձնախումբի եւ Հ.Մ.-Լ.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամներ, բարերարներ եւ հիւրեր:

Համա-Հ.Մ.-Լ.Մ.ական խաղերու պատմութեան մէջ, առաջին անգամ ըլլալով, 653 մարզիկներ կը համախմբուէին 8 մարզածեերու շուրջ մրցելու համար: Ներկայութիւնն ու միջոցորտը տօնակա խանդավառութիւն կը սփռէին:

Առաջին անգամը չէր, որ միութիւնը համա-Հ.Մ.-Լ.Մ.ական ձեռնարկ մը կը կատարէր Հայաստանի մէջ: Հինգ բանակումներ եւ անգամ մըն ալ մարզախաղեր կազմակերպուած էին արդէն Հայաստանի մէջ: Այսինքն՝ բազմահարկ սկսուածներ եւ մարզիկներ Հ.Մ.-Լ.Մ.ի ճամբով հայրենիք այցելած էին, ազգային իրենց արմատներուն ծանօթացած էին եւ հայ ըլլալու, հայ մնալու ապրումով զօրացած՝ վերադար-



ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿԻՐԹԱԿԱՆ ԸՆԴՏԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ջերմօրէն շնորհատրում եւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 9-րդ համահայկական մարզախաղերը երեսանում կազմակերպելու կապակցութեամբ:

Միւրեւի մարզիկներ, սպորտային այս կարեւոր իրադարձութեան կազմակերպիչներ, ընդունէք իմ լաւագոյն բարեմաղթանքները՝ մարզական խաղերը Հայրենիքում համահայկական տօնի վերածելու առիթով:

Սպորտ առաւել եւս կարեւորում է համահայկական խաղերի անցկացումն ազատ եւ անկախ Հայաստանում հիմքում ունենալով ազգի համախմբումը հայրենիքի շուրջ:

Հ.Մ.-Լ.Մ.ի համահայկական խաղերը լոկ մարզական իրադարձութիւն չեն, այլ Հայաստան-Սփիւռք քաղաքականութեանը ուղղուած ազգապահպան ու ազգահաւաք լաւագոյն գործ, որը իւրովի ազդակ է հայկական Սփիւռքի եւ Մայր Հայրենիքի միջեւ գործակցութիւնը առաւել խորացնելու, երիտասարդութեանը նոր լիցքեր հաղորդելու համար:

Ուրախութեամբ եւ պատրաստակամութեամբ Հ.Մ.-Լ.Մ.ի Սփիւռքի նախարարութիւնն աջակցում ու օժանդակում է նման ձեռնարկներին, որով ընդգծում եւ երիցս հաստատում է նախարարութեան դերակատարութիւնը համահայկական ծրագրեր իրականացնելիս: Սպորտային այս մէկ առիթ եւ երիտասարդութեանն առաւել հայակենտրոն, հայաշունչ ու հայադասան դարձնելու, նրանց մէջ հայրենիքի նկատմամբ սէրն առաւել ուժեղացնելու առումով:

Սպորտային մեր երիտասարդների համար

մարզամշակութային այս օրերը՝ իրենց բացառիկ մթնոլորտով, ընդմիջտ կը դրոշմուեն նրանց սրտերում ու հոգիներում, որպէս հայակերտումի սնուցող ակունք:

Իւրաքանչիւր համահայկական մարզախաղ նաեւ գեղեցիկ առիթ է միմիանց սրտաբուխ, անկեղծ խօսքեր ասելու: Ես շնորհատրում եւ մեր մարզիկներին ու նրանց մարզիչներին, ովքեր անմնացորդ նուիրումով մարզում եւ մեր երիտասարդներին արտերկրում, դաստիարակում նրանց մէջ կամք եւ արիւթիւն, միջտ առաջինը լինելու եւ յաղթանակի հասնելու վճռականութիւն:

Եթէ դուք մասնակցում էք այս խաղերին, արդէն յաղթող էք, քանզի հայրենիքի հողը տրորած իւրաքանչիւր մարզիկ արդէն իր կամային յատկանիշներով անպարտելի է: Վստահ եւ, որ բոլոր յաղթանակները՝ անհատական եւ թիմային մարզածեերում, նոր երանգներ կը հաղորդեն հայկական մարզական ժառանգութեանը, որն ի դէմս Ձեզ՝ ունի արժանի հետեւորդներ եւ նուիրեալներ:

Սպորտային միջոցառումը հնարաւորութիւն է տալիս աշխարհի տարբեր անկիւններից ժամանած հայ երիտասարդներին ոչ միայն մրցել եւ իրենց ուժերը չափել տարբեր մարզածեերում, այլ, որ աւելի կարեւոր է, ձեռք բերել բազում ընկերներ ու բարեկամներ, ամրապնդել հայկական ինքնութիւնը:

Մասնաձեւակի շնորհակալութիւն նաեւ բարերարներին, հովանաւորներին, Հ.Մ.-Լ.Մ.ի Կենտրոնական եւ Ծրջանային Վարչութիւններին, ատենապետներին, այն հսկայաճաւաղ աշխատանքների համար, որ իրականացնում եւ Սփիւռքում հայ երիտասարդներին առողջ հոգով եւ առողջ մարմնով կուիելու համար:

Մաղթում եւ միջոցառման բոլոր մասնակիցներին նորանոր յաջողութիւններ, առողջութիւն եւ անսպառ եռանդ՝ նուիրումով շարունակելու Սփիւռքի հայկական համայնքներում ազգային կեանքի բարելաւման եւ զարգացման շնորհակալ գործը: Մենք հաւատում ենք հաւաքական մեր ուժին, մեր Դատի արդար լուծմանը:

Լաւագոյն մաղթանքներով եւ սիրով՝

ՀՐԱՆՈՅԸ ՅԱԿՈՒԲԵԱՆ
Ը. Ը. Սփիւռքի Նախարար



ձած էին իրենց երկիրները: Հայապահպանման ասկէ աւելի լաւ նախաձեռնութիւն ի՞նչ կրնար ըլլալ: Հ.Մ.Ը.Մ. իր դերակատարութեան մէջն էր՝ նորահաս սերունդներուն փոխանցելով հայութեան եւ հայրենիքին կապուածութիւն՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու թէ մարզախաղերու ճամբով:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս մարզախաղերը 20 տարի առաջ ծաւալած այդ աշխատանքին մէկ օղակն էին պարզապէս: Մարզախաղերը ունէին յայտագիր, ախոյեաններ, մրցանակներ, բայց նաեւ՝ այս բոլորէն անդին ուղղակի թէ անուղղակի դաստիարակութեան բաժին: Այս առթիւ կ'արժէ կանգ առնել քանի մը երեւոյթներու դիմաց:

Ա. Վաստակաշատ միութենականներու յիշատակին մետալներու պատրաստութիւն եւ լաւագոյն մարզիկներու տուհուլթիւն: Միութիւնը այս մարզախաղերուն երախտապարտութեամբ յիշեց 16 վաստակաշատ դէմքեր, որոնք իրենց կնիքը դրած են վերջին կէս դարու անոր գործունէութեան վրայ: Միութիւնը յիշեց եւ նոր սերունդին յիշեցուց 16 եղբայրները չմոռնալ, այլ՝ ընթանալ անոնց ուղիով, ազգային-գաղափարական եւ միութենական նուիրումի անոնց օրինակով:

Բ. Միութիւնը յիշեց եւ ոգեկոչեց Հայ Դատի մեր նորագոյն նահատակները, երբ Շաբաթ, 27 Յուլիսին, իր պատասխանատուներով եւ շրջաններու ներկայացուցիչներով ներկայ գտնուեցաւ Լիզպոնի տղոց հոգեհանգստեան արարողութեան, Երեւանի մէջ: Երեկոյեան, մարզախաղերու բացման հանդիսութեան, խօսքերով թէ երգերով Հ.Մ.Ը.Մ. պատկերասփիւռէն ուղղակի հետեւող միլիոնաւոր հայութեան յիշեցուց Լիզպոնի Ծը, այն անձնագործ տղաքը, որոնք զոհուեցան, որպէսզի օրին մէկը մենք կարենանք անկախ Հայաստանի սրտին մէջ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր կազմակերպել եւ անոնց ազգային իղձերուն հետապնդումը Հ.Մ.Ը.Մ.ական ոճով նոր սերունդին փոխանցել:

Գ. Միութիւնը ոգեկոչեց նաեւ իր ազգային անցեալը, մեր դարաւոր պատմութիւնը, երբ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու իր ջահը բոցավառեց հայութեան պատմական քաղաք Էրեբունիի մէջ, այժմու Էրեբունի թանգարանին մօտ: Մեր արմատներուն կառչելու եւ մեր ինքնութեան եւ արժէքներուն տէրը ըլլալու լաւագոյն դասն էր, զոր ջահավառութեան ճամբով, Հ.Մ.Ը.Մ.ի միջոցով, փոխանցուեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մասնակիցներուն:

Դ. Այս մարզախաղերով Հ.Մ.Ը.Մ. կարեւոր պատգամ մըն ալ փոխանցեց համայն հայութեան, Սփիւռք թէ Հայաստան, երբ նուիրականացուց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր Շաւարշ Քրիսեանի անունը, իբրեւ ՀԱՅ մարմնակիրթական շարժումի ստեղծիչ: Քրիսեանի հանդէպ ուշացած պարտք մը ունէր հայրենի պետութիւնը, զոր հատուցեց արժանաւոր կերպով, երբ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու օրերուն, Յեղասպանութեան հիմնարկ-թանգարանը հրապարակեց պաշտօնական բացիկներ, որոնք կը յաւերժացնեն Քրիսեանի յիշատակը: Քրիսեանի ճամբով Հ.Մ.Ը.Մ. եւս իր 95-ամեակին զնահատուեցաւ ըստ ամենայնի:

Ե. Գնահատանքի արտայայտութիւն մը եղաւ Համաշխարհային Սկսուողական



Շարժումի եւրոասիական բաժանմունքի ընդհանուր քարտուղար Եւրոի Եմիլիանի ներկայութիւնը մարզախաղերու յաղթանակի պարահանդէսին: Եմիլիան իր ներկայութեամբ պատուեց Համաշխարհային Սկսուողական Շարժումին մէջ իր պատուաբեր տեղն ու դերը ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի հայրենի ընտանիքը, որ 1989-էն ի վեր լայն աշխատանք կը ծաւալէ սկսուողական միջազգային շարժումը հայրենիքի մէջ տարածելու համար: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անդամ է այդ շարժումին եւ ցարդ երկու անդամ ունեցած է անոր համաշխարհային Բիւրոյին մէջ (եղբայրներ Յարութիւն Յարութիւնեան եւ Բագրատ Եսայեան):

2. Երեւոյթներուն կարեւորագոյնը, սակայն, որուն դիմաց պէտք է երկար կանգ առնել, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն հանդէպ ցուցաբերուած ՊԵՏԱԿԱՆ հոգածութիւնն էր, առաջին անգամ ըլլալով: Այս նպատակով, Սփիւռքի նախարարութեան կից ստեղծուած էր յատուկ յանձնաժողով, բաղկացած Հայաստանի մարզական եւ ապահովական մարմիններու ներկայացուցիչներէն, ապահովելու համար մարզախաղերու հեզասահ ընթացքը, դաշտերու անդորրը եւ մասնակիցներու հանգիստը: Հայաստանի կառավարութեան կողմէ ցուցաբերուած այս կեցուածքը, որ իր արտայայտութիւնը գտաւ նաեւ Հայաստանի վարչապետին ելոյթով, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը ընդունած ժամանակ, արժանի է շնորհակալութեան եւ... խորհրդածութեան:

Հոգածութիւնը ունէր նաեւ գործնա-

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԱՂԱԽԸ

Շամա-Շ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերի Յարգելի՛ մասնակիցներ, Սիրելի՛ հայրենակիցներ,

Գրեթէ մէկ ամիս յետոյ մենք ականատեսն ենք լինելու համա-Շ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերի անցկացմանը: Չեմ ուզում ասել «հերթապահ» խօսքեր, բայց չեմ էլ կարող զերծ մնալ իմ ոգեւորութիւնը եւ ուրախութիւնը ձեզ փոխանցելու հնարաւորութիւնից՝ սպորտի գալիք յիրաւի տօնական միջոցառման առիթով:

Սպորտը մի երեւոյթ է, որը միաւորում է համայն մարդկութեանը, ընդունակ՝ հաշտեցնելու նոյնիսկ ամենաանհաշտ թուացող թշնամիներին, քանի որ սպորտն ունի իր արդար կանոնները, որտեղ յաղթում է միշտ ուժեղը, որտեղ չկայ այն անարդարութիւնը, որն այսօր տիրում է աշխարհով մէկ: Սպորտը խաղաղութեան եւ եղբայրութեան հաստատման աշխարհում գոյութիւն ունեցող շատ քիչ միջոցներից է: Եւ եթէ սպորտն ի զօրու է մի յարկի տակ հաւաքելու թշնամիների, ի զօրու է, գոնէ առժամանակ, հարթելու նրանց միջեւ եղած հակասութիւնները,

կան արտայայտութիւն. Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէին վերաբերումը Հ.Մ.Ը.Մ.ի նկատմամբ: Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէն, յանձինն իր նախագահին, հովանաւորեց այս մարզախաղերը: 95 տարի ետք, հայրենի պետութեան մարզական բարձրագոյն հեղինակութեան ներկայացուցիչները զնահատելի քայլով մը իրենց հովանին տուին այն միութեան, որ առանց պետական միջոցներու 95 տարիէ Սփիւռքի մէջ լծուած է մարզական հսկայական աշխատանքի, ի սպաս հայցի առողջ սերունդներու կերտման եւ ի նպաստ վաղուան հզօր հայութեան ստեղծման:

Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակին առիթով արձանագրուած այս բոլոր երեւոյթները, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու յաջողութենէն կամ արդիւնքներէն անկախ, ունին պարտաւորեցնող հանգամանք եւ բոլորին ուսերուն պարտք կը դնեն ԱՐԺԱՆԻ ԸԼԼԱԼ համագալին այն վերաբերումին, զոր կը ցուցաբերուի այսօր պետական բարձրագոյն մակարդակներէն մինչեւ համեստ քաղաքացիներու կողմէ:

Արժանի ըլլալ եւ նոյնքան պատասխանատու մօտեցումով շարունակել Հ.Մ.Ը.Մ.ական մեր առաքելութիւնը, յաւելելով ճիգով ու անհաշիւ զոհողութեամբ բարձրանալու համար յաջողութիւններու կատարը եւ մեզի հետ բարձրացնելու համար համայն հայութիւնը, մինչեւ որ հասնինք մեր անկատար բոլոր տեսներու իրականացման հանգրուանին:

ԵՌԻԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Շ.Շ. Սպորտի եւ Երիտասարդութեան
Շարքերի Նախարար



ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՈԳԻՈՎ

Շ.Մ.Ը.Մ.ը իր անցեալով ու իր քայլերգով անքակտելիորէն կապուած է անկախ Շայաստանի անունին ու իրականութեան: Զարմանալի չէ ուրեմն, որ աշխարհացրիւ միութեան մարզախաղերը, հակառակ բոլոր դժուարութիւններուն, կրկին տեղի կ'ունենան միութեան հարազատ բոյնի մարզադաշտերուն վրայ:

Անկախ հայրենիքը Շ.Մ.Ը.Մ.ի համար միայն աշխարհագրական յղացք մը չէ հանդիսացած: Շայրենիքի անկախութեան գաղափարը խարսխուած է իւրաքանչիւր մեծ թէ փոքր միութենականի մտքին մէջ՝ անոր տրուած գերազանցապէս համամարդկային ու միաժամանակ ազգային դաստիարակութեամբ: Երբ 70 տարիներ շարունակ միութեան պարտադրուած էր բացառաբար Սփիւռքի մէջ գործելու, հայոց պետական անկախութիւնը խորհրդանշող եռագոյնը դարձաւ անոր դրօշը. օտարութեան մէջ երկուքը, եռագոյն եւ Շ.Մ.Ը.Մ., դարձան հոմանիշներ: «Յառաջ Նահատակ»ը բոլոր միութենականները վերածեց անկախութեան համար մարտնչող կամաւորներու:

Շտեմաբար Շ.Մ.Ը.Մ.ականը իր սկաուտի, մարզիկի կամ վարչականի ինքնութեան կողքին նաեւ ինքնաբերաբար գաղափարի զինուոր է: Ան կը գուրգու-

րայ հայրենիքին եւ անոր անկախութեան վրայ. կը սիրէ զանոնք ներկայացնող խորհրդանիշները: Ան կը պաշտէ այն հողը, որուն վրայ մրցելով ինք պիտի յաղթէ կամ պարտուի: Իր մրցումները հայրենի հողին վրայ կազմակերպելով այդտեղ կը փոխադրէ իր շարքերուն մէջ անեղծ պահած ողիմպիական ոգին. անաչառութիւնը, արդար մրցակցութիւնը, արհեստավարժ մարմնակրթութեան մանրէէն հեռու մնացած սիրողական մարմնամարզը յատկանշող մաքուր նկարագիրը ու նման գաղափարական այլ արժէքներ, որոնք ներկայ նիւթապաշտ հասարակութիւններով յագեցած աշխարհին մէջ անցեալէն ա՛լ աւելի փայլուն ու զարմանահրաշ յատկութիւններու տեսք ստացած են: Օրէ՛նք է, ինչ որ հազուագիւտ դարձած է, արժէքի մագլցում կ'արձանագրէ: Այդ իսկ պատճառով աւելի մեծ ազդեցութիւն կը բանեցնէ շրջապատին վրայ:

Շայրենիքի մէջ տեղի ունեցող համա-Շ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը վստահաբար պիտի նպաստեն հայրենի հայութեան եւ սփիւռքահայութեան միջեւ կապերու յաւելեալ ամրապնդման:

Շ.Յ.Դ. ԲԻԻՐՕ



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

9-րդ մարզախաղեր
27 Յուլ.-3 Օգ. 2013
Երեւան, Հայաստան

8-րդ մարզախաղեր
1-8 Օգոստոս 2009
Երեւան, Հայաստան

7-րդ մարզախաղեր
24-31 Յուլիս 2005
Աթէնք, Յունաստան

6-րդ մարզախաղեր
11-16 Օգոստոս 2001
Պէյրուս, Լիբանան

5-րդ մարզախաղեր
31 Յուլիս-10 Օգ. 1997

Ուաշինկթըն եւ Նիւ Երքի
Արեւելեան Մ. Ն.

4-րդ մարզախաղեր
9-18 Յուլիս 1993
Թորոնթօ եւ Մոնթրէալ, Գանատա

3-րդ մարզախաղեր
12-16 Ապրիլ 1989
Վալանս, Ֆրանսա

2-րդ մարզախաղեր
2-7 Յուլիս 1985
Լոս Անձելըս
Արեւմտեան Մ. Ն.

Առաջին մարզախաղեր
26 Յունիս-5 Յուլիս 1981

Թորոնթօ եւ Մոնթրէալ, Գանատա





ՆԵՐԿԱՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի
 ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
 Գառնիկ Մկրտիչեան
 Միրան Շիմչիրեան
 Ստեփան Տեր
 Պետրոսեան
 Բագրատ Եսայեան
 Հրաչ Սիսեռեան
 Հրաչ Մեսրոպեան
 Արմեն Կէտիկեան

ԿԵԴՐ. ՄԱՐԶԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Մանուէլ Մարսելեան
 Հրաչ Շմաւոնեան
 Վիգէն Աբելեան
 Օշին Փիրումեան
 Արմանտ Քիլէճեան
 Սեւակ Կարապետեան
 Անտրէ Տատայեան
 Վահան Չալիքեան

ՄԱՐԶԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Վահան Համամճեան
 Վաչէ Սարգիսեան
 Քրիստ Յովսէփեան

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի
 ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ
 Աննա Ասատրեան
 Դաւիթ Գինոսեան
 Տարօն Կիւլիւմեան

Հայկ Դաւթեան
 Երանուի Խլղաթեան
 Գեորգ Կարինեան
 Համլէթ Հախեան
 Նունէ Մարգարեան
 Վարդան Միրումեան
 Ալեքսանտր
 Մուրատեան
 Խորէն Նազարեան
 Աննա Սարաճեան
 Յարութ Սարգսեան
 Յովհաննէս
 Սարգսեան
 Դաւիթ Փանոսեան

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆ
 Վերա Բարսեղեան-
 Տեր Պօղոսեան
 Լիանա Սարգիսեան

«ՄԱՐԶԻԿ»
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
 Վիգէն Աւագեան

ՀԱՄԱՑԱՆՑ
 Աշոտ Սանամեան

ՊԱՆԴՈՎՆԵՐՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
 Անահիտ Գոլանճեան

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ
 Յակոբ Պերպէրեան

Ասատուր Եսայեան
 Սերգէյ Յակոբեան
 Թորոս Տեր Արթինեան
 Արսէն Սարգսեան

ՄԱՍՆԱԿԻՑ
ՇՐՋԱՆՆԵՐ-ԹԻԵՐ
 Լիբանան 95
 Արեւմտ. Մ. Ն. 83
 Սուրիա 62
 Հայաստան 60
 Արեւել. Մ.Ն. 56
 Գանատա 52
 Քուէյթ 44
 Հ. Ամերիկա 41
 Ֆրանս 37
 Աւստրալիա 24
 Պուլկարիա 22
 Երուսաղէմ 21
 Գահիրէ 19
 Լոնտոն 12
 Պաղտատ 7
 Կիպրոս 1

Հ.Մ.Ա.Կ. 17



ՀՈՎԱՆԱԴՐՆԵՐ

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ
ՊԱՏՈՒՅ ՆԱԽԱԳԱՅ
 Գագիկ Ծառուկեան
 Հայաստանի
 Հանրապետութեան
 Ողիմպիական Կոմիտէի
 Եւ «Ծառուկեան»
 Հիմնադրամի նախագահ

ԽՈՒՄԲԵՐՈՒ ԲԱԺԱԿՆԵՐՈՒ
ՀՈՎԱՆԱԴՐՆԵՐ
 Պասքեթպոլի «Գեղամ
 Եւ Ալիս Սիսեռեան»
 բաժակներ
 Հովանաւոր՝ եղբ. Եւ քոյր
 Հրաչ Եւ Էլիզապէթ
 Սիսեռեան

Ֆութպոլի «Չաւէն Տեր
 Պետրոսեան» բաժակներ
 Հովանաւոր՝ եղբ. Եւ քոյր
 Ստեփան Եւ Թամար Տեր
 Պետրոսեան

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ
ԲԱԺԱԿԻ ՀՈՎԱՆԱԴՐՆԵՐ
 Լոդի բաժակ
 Հովանաւոր՝ եղբ. Եւ քոյր
 Ժիրայր Եւ Սրբուկ
 Սարգիսեան

Աթլէթի բաժակ
 Հովանաւոր՝ եղբ. Եւ քոյր
 Ալեքքօ Եւ Անի Պեգիքեան

ՈՍԿԵԱՅ ՀՈՎԱՆԱԴՐՆԵՐ
 Եղբ. Եւ քոյր Ատոն
 Եւ Սելլա Թնճուկեան
 Եղբ. Եւ քոյր ճորճ
 Եւ Մարի Տաքէսեան
 Եղբ. Ալպէրթ Շահինեան



լով եւ կ'աւարտէր երեկոյ-
եան, մարզական կեդրո-
նական յանձնախումբ-
ըի եւ մարզական
պատասխանատու-
ներու միացեալ
նիստերով: Ուշ գի-
շերին աշխատանքը
դաշտերէն կը փո-
խադրուէր... Համա-
ցանց: Օրական կ'ա-
պահովուէր մրցումնե-
րուն տեղեկատուութիւնը
եւ նկարները Հ.Մ.Լ.Մ.ի կայք
էջին եւ ղեկավարի էջերուն վրայ:

եւ պատկերասփիւռի կա-
յաններու մնայուն թղ-
թակիցները: Կը բաւէ
նշել, որ «Մարզիկ»
Համա-Հ.Մ.Լ.Մ.-
ական 9-րդ մարզա-
խաղերէն վերա-
դարձաւ 25 հազար
նկարներու արխի-
ւով մը, որուն լաւա-
գոյն արտայայտու-
թիւնը կը հանդիսանան
թերթին այս թիւը զարդա-
րող մեծաթիւ նկարները:

Մեծ էր աշխատանքի դաշտը, նոյն-
քան մեծ էր պատասխանատու անձնա-
կազմին նուիրումը, որովհետեւ այս բո-
լորը կ'իրագործուէին կամաւոր աշխա-
տանքով, սիրալոյսով զոհողութեամբ եւ
միութենական բժախնդրութեամբ:

Մարզախաղերուն մեծագոյն բա-
ցական, անկասկած, Յունաստանն էր,
Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 7-րդ մարզախա-
ղերու հիւրընկալ շրջանը: Շատ մեծ ազ-
դեցութիւն կրնար ունենալ Սուբիոյ
շրջանին բացակայութիւնը, եթէ երբեք
յատուկ կարգադրութեամբ մը, այս
մարզախաղերուն Սուբիոյն չներկայաց-
ւէր Հայաստան եւ Լիբանան ապաստան

Մարզախաղերը ունեցան իրենց
գրքովը, լուսանկարիչներու «բանակ»ը



ԻՍԿԱԿԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ

Վ. Աւագեան ՊԵՅՐՈՒԹ

Նուաճումները դիւրին-դիւրին
չեն իրագործուիր: Ամիսնե-
րու, տարիներու ծրագրում
եւ պատրաստութիւն կ'ենթադրեն:
Նուաճումները սովորական յաջողու-
թիւններ չեն ըլլար, մարդիկ հանգրուա-

նէ մը նոր հանգրուան կը փոխանցեն:
Չափազանցութիւն պէտք չէ թուի,
ուրեմն, Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 9-րդ
մարզախաղերը միութեան պատմու-
թեան մէջ իբրեւ նուաճում բնութագրե-
լը:

Հիմնաւորե՞նք:
Համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղե-
րը ունին 32 տարուան պատմութիւն:

Յարդ կատարուած են 8 մարզախաղեր,
որոնց մասնակցութեան թիւը, իբրեւ
շրջան եւ մասնակից, երբեք չէ ունեցած
9-րդ մարզախաղերուն պատկերը:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 9-րդ մարզա-
խաղերուն իրենց մասնակցութիւնը բե-
րին 16 շրջաններէ եւ Թեհրանի Հ.Մ.-
Ա.Կ.էն 653 մարզիկ-մարզիկուհիներ: 8-
րդ մարզախաղերու 450 մասնակիցները
կու գային 14 շրջաններէ եւ Թեհրանի
Հ.Մ.Ա.Կ.էն, որ իբրեւ քոյր միութիւն իր
օգտակար ներկայութիւնը կ'ունենայ
Համա-Հ.Մ.Լ.Մ.ական բոլոր նախաձեռ-
նութիւններուն:

Կիրարկուած մարզաձեւերուն թիւը
աննախընթաց էր՝ 8 մարզաձեւ: Մար-
զախաղերու պատմութեան մէջ չէր պա-
տահած, որ միաժամանակ յայտագրի
վրայ ըլլային 8 մարզաձեւեր, 3-ը խմբա-
յին՝ Ֆութպոլ, պասքեթպոլ (երէց եւ
կրտսեր) եւ վոլիպոլ, 5-ը անհատական՝
լող, փինկ-փոնկ, աթլէթ, ճատրակ եւ
թենիս, որ այս մարզախաղերուն գլխա-
ւոր նորութիւնն էր:

Ֆութպոլի խումբերուն թիւը 10 էր,
պասքեթպոլի երէց եւ կրտսեր խումբե-
րուն թիւը՝ 23 (15-ը երէց, 8-ը կրտսեր),

իսկ վոլիպոլի խումբերուն թիւը՝ 3: Այս-
պէս, 36 խումբեր 10 օրուան ընթացքին
կատարեցին 88 մրցումներ, միջին հաշ-
ւով՝ օրական 9 մրցում, ինչ որ պերճա-
խօս վկայութիւնը կու տայ մարզախա-
ղերու ընդհանուր տարողութեան եւ
յայտագրին խճողուածութեան: Առանց
մոռնալու տակաւին անհատական մար-
զախաղերու ճակատումները, որոնք
տեղի ունեցան 5 տարբեր դաշտերու
մէջ, գրեթէ միաժամանակ: Այս բոլորը
կ'ենթադրէին ժամացոյցի ճշգրտու-
թեամբ աշխատող վարչական պատաս-
խանատու կազմ, որ ժամը-ժամուն պի-
տի հսկէր յայտագրի գործադրութեան,
դաշտերու վրայ պիտի կազմակերպէր
մրցումները եւ, ամէնէն կարեւորը, ան-
թերի կանոնադրութեամբ պիտի ապա-
հովէր մարզիկներու երթ ու դարձը,
անուղղը եւ կեցութիւնը:

Հսկայական այս աշխատանքին
լծուած էին Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան եւ մարզական կեդրոնա-
կան յանձնախումբի Երեւան ժամանած
անդամները, մարզական օժանդակ
յանձնախումբի եռանդամ կազմը, Կեդ-
րոնական Վարչութեան եւ Հ.Մ.Լ.Մ.-
Հ.Մ.Ա.Կ.ի չորսանդամ պաշտօնէն-
թիւնը եւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.ի սկաու-
տական օժանդակ մարմինը: Աշխատան-
քը կը սկսէր առաւօտ կանուխ, մրցակից
խումբերը մարզադաշտեր առաջնորդե-





գտած Հ.Մ.Լ.Մ-ի Հալեպի 62 մարզիկ-մարզիկուհիներով: Ուշագրաւ էր Պաղ-տատի եւ Կիպրոսի մասնաճիւղերուն մասնակցութիւնը այս մարզախաղե-րուն: Զոյգ շրջանները 12 տարի առաջ խորհրդանշական մասնակցութիւն ու-նեցած էին Պէյրութի համա-Հ.Մ.Լ.Մ-ա-կան 6-րդ մարզախաղերուն, փինկ-փոն-կի եւ Ֆուլթայլի մրցումներուն հիւրա-բար ներկայ գտնուելով:

Անկասկած, նուաճում էր Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի մասնակցութիւնը այս մար-զախաղերուն 60 հոգինոց պատկառելի պատուիրակութեամբ մը. պասքէթպոլի տղոց ու աղջկանց խումբեր, վոլիպոլի աղջկանց խումբ, 1 աթլէթ, 7 լողորդ, 8 ճատրակի վարպետ եւ 8 փինկ-փոնկի մասնակից: Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի մար-

զական աշխարհ լայն դուռնէն մուտքը ողջունելի է եւ նոր հեռանկարներ կը բանայ ցարդ միայն սկաուտական գոր-ծունէութեամբ սահմանափակուած Հ.Մ.Լ.Մ-ի հայրենի ընտանիքին համար: Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ- խմբային խաղերու իր անդրանիկ մասնակցութեամբ (նա-խորդ մարզախաղերուն իր մասնակցու-թիւնը բերած էր ճատրակի, փինկ-փոն-կի եւ լողի մրցումներուն) կ'արձանագ-րէր անսպասելի փայլուն արդիւնքներ, երբ կը խլիւր վոլիպոլի աղջկանց մրցում-ներուն առաջնութիւնը եւ պասքէթպոլի մրցումներուն երկրորդութիւնը: Տղոց պարագային ան կը հանդիսանար եր-րորդ: Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի մարզիկները մետալներ կ'ապահովէին նաեւ լողի (3 ոսկի, 1 պրոնզ), ճատրակի (1 ոսկի, 1 արծաթ) եւ աթլէթի (1 արծաթ) մրցումնե-րուն:

Մետալներու լեգ-ուով խօսելով, Լիբա-նան կ'արձանագրէր իր եւ համա-Հ.Մ.-Լ.Մ-ական մարզախա-ղերու պատմութեան մեծագոյն նուաճումը, երբ 95 հոգինոց իր պատուիրակութեամբ կը յաջողէր տիրանալ 44 մետալի (15 ոսկի, 15 արծաթ, 14 պրոնզ) եւ մ ա Ր զ ա խ ա ղ ե Ր Ո Ւ շ Ր Յ Ո Ն Ը բաժակին: Մարզախաղերու մաս-նակից 17 պատուիրա-կութիւններէն 16-ը կը

ՀԱՄԱ-Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ 9-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԴՀ.
1. Լիբանան	15	15	14	44
2. Սուրիա	8	5	4	17
3. Արեւմտեան Մ.Ն.	7	3	5	15
4. Հ.Մ.Ա.Կ.	6	11	8	25
5. Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.	5	3	2	10
6. Պաղտատ	3	1	2	6
7. Գանատա	2	4	4	10
8. Հարաւային Ամերիկա	2	3	3	8
9. Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս	2	2	1	5
10. Պուլկարիա	1	1	1	3
11. Լոնտոն	1	-	-	1
Գահիրէ	1	-	-	1
13. Արեւելեան Մ.Ն.	-	3	-	3
14. Աւստրալիա	-	1	1	2
15. Քուէյթ	-	-	2	2
16. Կիպրոս	-	-	1	1
17. Երուսաղէմ	-	-	-	-

յաջողէին տիրանալ մետալներու: Միակ անբախտը կ'ըլլար Երուսաղէմի շրջա-նը, որ համա-Հ.Մ.Լ.Մ-ական մարզա-խաղերէն տուն կը վերադառնար ձեռ-նունայն (մետալներու ընդհանուր դա-սաւորումը տեսնել առանձին):


Համա-Հ.Մ.Լ.Մ-ական 9-րդ մարզա-խաղերը կը կազմակերպուէին Միջին Արեւելքի քաղաքական «տաք» ամիսնե-րուն, ապահովական եւ տնտեսական ծանր պայմաններու մէջ: Անհրաժեշտ էր որոշ «խենթութիւն» Գահիրէէն, Պաղտատէն, Երուսաղէմէն, Լիբանա-նէն եւ Սուրիայէն 250 մարզիկ-մարզի-կուհիներու մասնակցութիւնը ապահո-վելու համար: «Խենթութիւն»ը Հ.Մ.-Լ.Մ-ական էր, նուաճումը միութենա-կան:

Ուրախալի էր այս մարզախաղերուն տեսնել միութենական միեւնոյն դրօշին տակ գործող հոգեհարազատ երեք սե-րունդ, ինչ որ ինքնին նուաճում մըն էր սերնդափոխութեան տագնապ պարող մեր կեանքին համար: Երեւոյթը տպա-ւորիչ էր: Պատասխանատու մը քաղցր պարտականութիւնը կը ստանձնէր պարզեւտարելու մրցանակակիր իր... տղան ու աղջիկը: Հազիւ հինգ տարե-կան թոռնիկը մեծ հօրն ու մօրը անունը կրող բաժակը յանձնէր լողի ախոյեան շրջանի ներկայացուցիչին: Հայրը կ'ող-ջագուրէր վեց ոսկէ մետալի տիրացած աղջիկը: Մայրը թաքուն հպարտու-

թեամբ մը կը հետեւէր մարզախաղերու դաստիարակչական բաժինը վարող իր տղուն: Բոլորը «ձեռքով-ոտքով» մաս-նակից էին կատարուած նուաճումին, բոլորը իրարմով զօրացած, Հ.Մ.Լ.Մ-ի զօրացման տենդով տարուած:

Իսկական նուաճումը սակայն դաշ-տերու վրայ չէր, ոչ ալ ընկերային-դաստիարակչական հաւաքներու մէջ: Իսկական նուաճումը հոգիներու մէջ էր, իրենց հայկականութիւնը պարող եւ ազգային արմատները գտնող նորահաս սերունդի հոգեկան ապրումներուն մէջ, որոնք իւրաքանչիւր երիտասարդէ կեր-տեցին տարբեր ՀԱՅ մը: Նոր հայը, աւելի հայացած հայը, որ հաղորդուե-ցաւ էջմիածնի եւ Սարգրապատի խոր-հուրդներով, ծնրադրեց Նորավանքի եւ Գեղարդի խորաններուն առջեւ, ոգեշնչու-եցաւ Գառնիի տաճարով, հրապուր-ւեցաւ Սեւանայ լիճով եւ ազգային ուխտ կատարեց Եւաքլուրի նահատա-կաց շիրիմներով:

Բայց արդեօք այս չէ՞ր հիմնական նպատակը մարզախաղերուն Հայաս-տանի մէջ կազմակերպման: Մարզա-խաղերը միջոց էին, հայրենիքը՝ նպա-տակ, գերագոյն նպատակ, որուն հա-մար կ'արժէ ի գործ դնել անհաշիւ գո-հողութիւն եւ անհափելի «խենթու-թիւն»՝ չորս տարի ետք նոր նուաճում մը արձանագրելու համար:





ԿԱՐԳԱՊԱՏ ՄԱՐԶԻԿԸ

Շամա-Շ.Մ.Լ.Մ.ական իւրաքանչիւր ձեռնարկի Շ.Մ.Լ.Մ.ի ընտանիքը ինքզինք կը զգայ յաւելեալ յանձնառութեան դիմաց՝ իրեն վստահուած պատասխանատուութիւնը լաւագոյն ձեւով յաջողցնելու համար:

Շամա-Շ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերը ստեղծուած օրէն նոյն նպատակով, նոյն քայլերգով կ'իրականանան փոխանցումի հաւասար ջերմութեամբ:

Այսօր մեր հայեացքները ուղղուած են Շ.Մ.-Լ.Մ.ական մարզիկներուն, որոնք գաղթօձախներէն մէկտեղուած են Մայր Շայրենիքի հողին վրայ:

Շամա-Շ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերուն մարզիկը ի սկզբանէ գիտէ, որ այս մարզախաղերը ունին միայն ու միայն մէկ յաղթական՝ Շ.Մ.Լ.Մ.ը: Բոլորը պիտի մրցին այդ նպատակով, եւ իւրաքանչիւրը իր մրցակիցին աչքին մէջ նայելով մտովի պիտի ըսէ.

Շ.Մ.Լ.Մ.ական մարզիկը ամէն տեղ պարտաւոր է ըլլալ կարգապահ, օրինապահ եւ աւանդապահ Շայ Մարդը:

Շ.Մ.Լ.Մ.ական մարզիկը ամէն տեղ պարտաւոր է ըլլալ պարկեշտ, հեղ եւ համեստ:

Շ.Մ.Լ.Մ.ական մարզիկը ամէն տեղ պարտաւոր է ըլլալ յանդուգն, քաջարի, պայքարող եւ յարատեւող:

Շ.Մ.Լ.Մ.ական մարզիկը ամէն տեղ պարտաւոր է ունենալ ազնիւ հոգի եւ բարոյական ազնիւ յատկանիշներ:

Շ.Մ.Լ.Մ.ական մարզիկը ամէն տեղ պարտաւոր է կառչած մնալ վեհ սկզբունքներու եւ վաւերական

արժէքներու՝ բարձրանալու եւ բարձրացնելու համար:

Շ.Մ.Լ.Մ.ական ընտանիքը արդար ակնկալութիւններ ունի իր մարզիկներէն, որովհետեւ անոնք կը ներկայացնեն ազգին կարգապահ երիտասարդութիւնը, որ վաղուան մեր յոյսն է:

Շ.Մ.Լ.Մ.ը մարզիկին համար տունն է, ընտանիք է, դպրոց է, եկեղեցի առաջնորդող միջոց է, մաքրամաքուր ու անսահման դաշտ է:

Շ.Մ.Լ.Մ.ի մարզիկը քաջ գիտէ, որ առանց կարգապահութեան ինք որեւէ արժէք չի ներկայացներ, որովհետեւ չկայ մարզախաղ առանց կարգապահութեան:

Շ.Մ.Լ.Մ.ի 95-ամեայ պատմութիւնը վկայ՝ ան իր կարգապահութեամբ յաղթահարած է տեսակաւոր ու տարբեր կերպարներով ներկայացող վտանգներ եւ մնացած է միշտ պատնէշի վրայ:

Սիրելի մարզիկներ,

եկէ՛ք ուրեմն պահ մը միայն անդրադառնանք, որ մեր ունեցածը մերը չէ, այլ անոնց, որոնք պատմութիւն կերտեցին եւ այսօր դուն՝ իբրեւ մարզիկ, քու կարգապահ կեցուածքովդ պիտի կերտես վաղուան պատմութիւնը:

Փառք ու պատիւ կարգապահ ու մարզական ոգի ունեցող մարզիկին:

Շ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերուն առիթով Հայաստան ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները Հինգշաբթի, 25 Յուլիսին այցելեցին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանին եւ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին:

Վարչապետ Սարգսեան Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուները ողջունելով դրուատեց միութեան դերը հայապահպանման աշխատանքներու մէջ: Ան նշեց, որ միշտ հաճելի է հանդիպիլ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան երիտասարդներուն հետ: «Համոզուած ենք, որ հայրենասիրական դաստիարակութեան ոգին պահպանելու եւ յառաջ մղելու գործը լաւագոյնս կը տանիք դուք: Կը հաւաստիացնենք, որ Հայաստանի կառավարութիւնը ամէն ինչ պիտի ընէ, որպէսզի լաւագոյնս կարենաք այդ առաքելութիւնը իրականացնել», յայտնեց վարչապետը:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան վարչապետին ներկայացուց Կեդրոնական Վարչութեան անդամները եւ ընդգծեց, որ այս մարզախաղերու նպատակներէն մէկն է սփիւռքահայ երիտասարդները մղել հայրենիք այցելելու: Ան տեղեկացուց, որ 27 Յուլիսին, «Ազատութեան» հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու բացման հանդիսաւոր արարողութիւնը, աւելցնելով, որ մարզախաղերը պիտի տեւեն մէկ շաբաթ:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները շնորհակալութիւն յայտնեցին վարչապետ Տիգրան Սարգսեանին՝ մարզախաղերու կազմակերպման օժանդակութեան իր ցուցաբերած պատրաստակամութեան համար: Անոնք խնդրեցին նաեւ վարչապետին աջակցութիւնը՝ Հայաստանի կառավարութեան որոշումով Հ.Մ.Ը.Մ.ին տրամադրուած բանակավայրի տարածքին բարեկարգման եւ ընդլայնման հարցով: Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները բարձր գնահատեցին վարչապետին յանձնարարութեամբ Սփիւռքի նախարարութեան կից ստեղծուած միջ-նախարարական յանձնաժողովը, որ իր մասնակցութիւնը կը բերէ մարզախաղերու յաջողութեան:

Ազգապահպանման առաքելութեան մէջ Սփիւռքի հայկական կուսակցութիւններուն նշանակալի դերը գնահատելով, վարչապետ Տիգրան Սարգսեան կարեւոր նկատեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ անոր ուղեկից միութիւններուն ամուր ըլլալը, որովհետեւ անոնք իրենց ուսերուն կը կրեն մեծ առաքելութիւն: Ան դիտել տուաւ, որ իրենց փափաքն ու հետաքրքրութիւնն է, որ հայկական աւանդական կուսակցութիւնները միշտ զօրաւոր ըլլան, որովհետեւ անոնց տարած հայապահպանման առաքելութիւնը այլ ընտրանք չունի:

Այցելութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը վարչապետ Սարգսեանին յանձնեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու յուշանուէրը: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը այնուհետեւ այցելեց Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին: Այցելութիւնը առիթ մը եղաւ, որպէսզի նախարար Յակոբեան Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներուն հետ քննարկէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու կազմակերպման առնչուող հարցեր:

Իր խօսքին մէջ, Յակոբեան խոստացաւ ամէն ճիգ ի գործ դնել Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներն ու հիւրերը պատշաճ կերպով ընդունելու եւ մրցակցութեան հաւասար պայմաններ ապահովելու համար: Յակոբեան յայտնեց, որ աշխատանքներուն մօտէն հետեւելու համար յառաջացուցած է յատուկ յանձնաժողով, որպէսզի Հայաստան ժամանող 653 մարզիկներն ու անոնց ընկերակցող հիւրերը հեզասահ կերպով վայելեն մարզախաղերու բոլոր մանրամասնութիւնները:

Իր խօսքին մէջ, Յակոբեան խոստացաւ ամէն ճիգ ի գործ դնել Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներն ու հիւրերը պատշաճ կերպով ընդունելու եւ մրցակցութեան հաւասար պայմաններ ապահովելու համար: Յակոբեան յայտնեց, որ աշխատանքներուն մօտէն հետեւելու համար յառաջացուցած է յատուկ յանձնաժողով, որպէսզի Հայաստան ժամանող 653 մարզիկներն ու անոնց ընկերակցող հիւրերը հեզասահ կերպով վայելեն մարզախաղերու բոլոր մանրամասնութիւնները:





Շարունակելով, Յակոբեան անդրադարձաւ սուրիահայ- յուլիան կապուած հարցերու եւ Սփիւռքի նախարարութեան գանազան ծրագիրներու: Ան շեշտեց, որ Սփիւռքի նախարար- րութիւնը ստեղծուած է սփիւռքահայութեան համար: Ան իր ուրախութիւնը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. հաւատարիմ իր առա- քելութեան կրկին հայրենիքի մէջ կը համախմբէ իր անդամ- ները:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, իր կարգին, շնորհակալական խօսք յայտնեց նախարար Յակոբեանին՝ իր ցուցաբերած աջակցու- թեան համար: Ան նշեց, որ Հայաստան-Սփիւռք անբակտելի կապը միշտ Հ.Մ.Ը.Մ.ի առաջնահերթութիւններէն եղած է: Եղբ. Մկրտիչեան շեշտեց, որ բոլոր մասնակիցները հայրենի- քի սիրով ամրանդուած պիտի վերադառնան իրենց երկիրնե- րը: Ապա, ան նախարարին նուիրեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու յուշանուէրը եւ յոյս յայտնեց, որ նման նա- խաձեռնութիւններն ու համահայկական հաւաքները ըլլան շատ արդիւնաւէտ եւ գործակցութիւնը ըլլայ շարունակա- կան:

ՏԵՍԱԿՅՐԻԹԻԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

31 Յուլիսի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ական պատուիրակու- թիւն մը, բաղկացած՝ Կեդրոնական Վարչութեան անդամ եղ- բարներ Գառնիկ Մկրտիչեանէ, Միհրան Շիմշիրեանէ, Ար- մէն Կէտիկեանէ եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր



եղբ. Վիգէն Աւագեանէ, այցելեց Հայաստանի մէջ Լիբանանի դեսպանատուն եւ երկու ժամ- ւան հանդիպում մը ունեցաւ դեսպան Ժան Մաքարոնի հետ:

Դեսպանը, որ ներկայ գտնուած էր համա- Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու բացման հանդիսութեան, դրուատիքով խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական փայլուն անցեալին եւ հայ համայնքին Լիբանանի մէջ ունեցած դե- րակատարութեան մասին: Ան տեղեկութիւն- ներ փոխանցեց Հայաստանի լիբանանեան դա- դութիւն մասին եւ խօսեցաւ Լիբանան-Հայաս- տան կապերու ամրապնդման եւ զարգացման ծրագիրներուն մասին:

Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը, իր կար- գին, դեսպան Ժան Մաքարոնի տեղեկութիւն- ներ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցին եւ Հա- յաստանի մէջ ունեցած գործունէութեան մասին: Նոյն առի- թով, պատուիրակութիւնը յիշատակի եւ երախտիքի յուշանու- էէր մը փոխանցեց դեսպանին:

Այցելութեանէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները ընթ- րիքի հիւրը եղան դեսպանին:



ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու նախօրեակին, Ուրբաթ, 26 Յուլիս 2013-ին, Երեւանի «Մարիոթ» պանդոկին մէջ տեղի ու- նեցաւ մարզախաղերու ծանօթացման մամուլյ ասուլիսը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդ- րոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեանի, Կեդրոնական Մարզական Յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանի եւ Հայաստանի Ողիմպի- իական Կոմիտէի ընդհանուր քարտուղար Հրաչ Ռուստամ- եանի:

Ասուլիսին սկիզբը, եղբ. Հրաչ Մեսրոպեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ տեղեկութիւններ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան եւ ներկայ վիճակին մասին: Ապա խօսք

առաւ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ ընդ- հանուր տեղեկութիւններ փոխանցեց մարզախաղերու մա- սին: Ան յայտնեց, որ 36 խումբեր կը մասնակցին Փուլթպոլի, պասքեթպոլի եւ վոլիպոլի մարզախաղերուն, իսկ անհատա- կան մարզախաղերը կ'ընդգրկեն աթլէթ, լող, փինկ-փոնկ, թենիս եւ ճատրակ:

Եղբ. Հրաչ Շմաւոնեան նշեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկրորդ մարզախաղերն են, որ տեղի կ'ունենան Հայաստա- նի մէջ: Ան շեշտեց, որ մարզախաղերու կազմակերպումը հա- մայն հայութեան մայրաքաղաք Երեւանի մէջ մեծ նշանակու- թիւն ունի բոլորին համար: Եղբ. Շմաւոնեան փոխանցեց, որ 2009-ի մարզախաղերը տեղի ունեցած են բարձր մակարդա- կով եւ աւարտած են իւրապատու յիշատակներով: Ան յոյս յայտնեց, որ այս մարզախաղերը եւս կ'ունենան նոյն մակար- դակը: Ան աւելցուց, որ անհատական մարզախաղերու կար- գին աւելցած են երեք մարզաձեւեր՝ թենիս, փինկ-փոնկ եւ աթլէթ: Եղբ. Շմաւոնեան շնորհակալութիւն յայտնեց Հա- յաստանի Ողիմպիական Կոմիտէին եւ անոր նախագահ Գա- գիկ Մառուկեանին, որ ստանձնած է մարզախաղերուն նա- խագահութիւնը: Ան ըսաւ, որ մարզախաղերուն ներկայ գտնուելու համար Հայաստան ժամանած են Հ.Մ.Ը.Մ.ի Կեդ- րոնական Վարչութեան 7 անդամներ, 653 մարզիկներ եւ անոնց ընկերակցող աւելի քան 2500 ծնողներ եւ բարեկամներ: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Սփիւռքի նախարարու- թեան, որ պետական յանձնաժողով յառաջացուցած է օժան- դակելու համար մարզախաղերու յաջողութեան:

Խօսք առաւ նաեւ Հրաչ Ռուստամեան: Ան գնահատեց հա- մա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն Երեւանի մէջ կազմա- կերպումը, նշելով որ Հայաստանի Ողիմպիական Կոմիտէն միշտ թիկունք կը կանգնի եւ լայն օժանդակութիւն կը ցուցա- բերէ համահայկական նմանօրինակ նախաձեռնութիւններու: Ան նշեց, որ Հայաստանի մարզական բոլոր Ֆետերասիոննե- րը դրական գործակցութիւն ցուցաբերած են այս մարզախա- ղերու յաջողութեան համար եւ կարեւոր նկատեց Հ.Մ.Ը.Մ.ա- կան մարզիկներու ներկայութիւնը հայրենի հողին վրայ:

Եղբ. Հրաչ Մեսրոպեան այս առիթով յայտնեց, որ մարզա- խաղերուն կը մասնակցի նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ պատուի- րակութիւնը, որուն մասնակցութեան կարելիութիւնը ընծայ- ւած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան յատուկ կար- գադրութեամբ:

Ասուլիսին աւարտին, եղբ. Հրաչ Շմաւոնեան ներկայա- ցուց մարզախաղերու բացման հանդիսութեան ծրագիրին մանրամասնութիւնները, յայտնելով թէ ազդանշանը պիտի տրուի երեկոյեան ժամը 6.30-ին, «Էրբուրնի» թանգարանէն, ուր պիտի բացվաւ մարզախաղերու ջահը: Այնուհետեւ, 34 մարզիկ-մարզիկուհիներու վազբով ջահը պիտի հասնի «Ազա- տութեան» հրապարակ:





ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՕՓԵՐԱՅԻ «ՖԻԼՀԱՐՄՈՆԻՔ» ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մարզախաղերու կողքին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցումներու մասնակից մարզիկ-մարզիկուհիները ունեցան երկու հա-լաքներ, խաղերու նախօրեակին եւ ըն-թացքին:

Մարզախաղերու նախապատրաս-տութեան հաւաքը տեղի ունեցաւ բաց-ման հանդիսութենէն անմիջապէս առաջ, Շաբաթ, 27 Յունիսի յետմիջօրէի ժամը 4.30-ին, Երեւանի պետական օֆի-

րայի «Ֆիլհամոնիք» սրահին մէջ, ներ-կայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառ-նիկ Մկրտիչեանի, Միհրան Շիմշիրեանի, Ստեփան Տէր Պետրոսեանի, Հրաչ Սի-սեռեանի, Հրաչ Մեսրոպեանի, Բագրատ Եսայեանի եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու պատասխանատու անձնակազմին՝ կեդրոնական մարզա-կան յանձնախումբի եւ մարզական օժանդակ յանձնախումբի անդամներ:


Հաւաքին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք Կեդրոնական Վարչութեան ատե-նապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ող-ջունեց ներկաները եւ մաղթեց, որ մար-զախաղերը ընթանան Հ.Մ.Ը.Մ.ական ոգիով, յաղթող-պարտուող չըլլայ, այլ՝ յաղթանակէ միութեանական ոգին:

Իսօք առաւ մարզախաղերու պա-տասխանատու մարմինն մօտ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներ-



կայացուցիչ եղբ. Ստեփան Տէր Պետրոս-եան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ական մար-զիկը ունի զինք յատկանշող արժէքներ՝ մաքուր նկարագիր, կարգապահ կեց-լածք եւ մարզական բարձր ոգի: Հ.Մ.Ը.Մ.ականը կը յարգէ իր պատասխանա-տուները, կ'ենթարկուի անոնց ցուց-մունքներուն եւ կը հաւատայ հաւաքա-կան աշխատանքի ու համագործակցու-թեան սկզբունքին:

Յաջորդեց մարզախաղերու պատաս-խանատու մարմնի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի խօսքը: Ան ներ-կայացուց խաղերու պատասխանատու-ները՝ եղբայրներ Հրաչ Շմառնեանը,



Օշին Փիրումեանը (բացման հանդիսու-թեան պատասխանատուներ), Անտրէ Տատայեանը, Սեւակ Կարապետեանը (պաքեթպոլի պատասխանատուներ), Արմանտ Քիլէճեանը (լողի եւ վոլիպոլի պատասխանատու), Վահէ Սարգիսեանը (ֆուլթպոլի պատասխանատու), Վահան Համամճեանը (աթլետիկայի պատասխա-

նատու) եւ Քրիստ Յովսէփեանը (թենի-սի պատասխանատու): Ան նշեց, որ կազմակերպիչ յանձնախումբի անդամ-ներու շարքին են եղբայրներ Վիգէն Արէլեանը եւ Վահան Զալիբեանը: Այնուհետեւ, եղբ. Արմանտ Քիլէճե-ան ծանօթացուց մարզախաղերու մասնակից շրջանները: Իւրաքանչիւր





ԱԶՆԻՒ ԴԱՅՔԱՐ, ԱՐԴԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆ

Սիրելի հայրենակիցներ, քոյրեր եւ եղբայրներ

Ուրախ եմ ողջունելու ձեզ համա-Շ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերի բացման կապակցութեամբ:

Սա իսկապէս կարեւոր իրադարձութիւն է, կարեւոր է ոչ միայն մարզական, այլեւ համահայկական գաղափարների տարածման, ազգային միասնականութեան ամրապնդման տեսանկիւնից:

Երեւանն այսօր հիւրընկալել է մեր հայրենակիցներին աշխարհի բազմաթիւ երկրներից: Սիրելի հայրենակիցներ, դուք եկել էք հայրենիք: Ոչ ոք այստեղ հիւր չէ: Ըայ ժողովուրդն ունի մէկ հայրենիք՝ Ըայաստանի Ըանրապետութիւնը:

Ըայրենիքը չի լինում հեռու կամ մօտիկ, հայրենիքը չի լինում հարուստ կամ աղքատ, հայրենիքը չի լինում վերացական:

Իմ ցանկութիւնն է, որ համահայկական բոլոր կարեւոր միջոցառումները անցկացուեն Ըայաստանում: Ես ուրախ եմ, որ համա-Շ.Մ.Ը.Մ.ական խաղերի կազմակերպիչները կայացրել են հէնց այս որոշումը:

Այս որոշմամբ մենք էականօրէն բարձրացրել ենք խաղերի հեղինակութիւնն ու պատմական նշանակութիւնը:

Այս խաղերն անցկացում են դժուար ժամանակներում: Ըայաստանում առկայ են բազմաթիւ մտահոգիչ խնդիրներ, չլուծուած հարցեր: Սակայն հէնց նման միջոցառումների շնորհիւ է հնարաւոր բարձր պահել ժողովրդի ոգին: Այսպիսի միջոցառումներն են մեզ եւ ողջ աշխարհին ապացուցում, որ հայ ժողովրդի միասնականութեան դէպքում անյաղթահարելի որեւէ խնդիր գոյութիւն չունի: Չկայ մի ուժ, որը կարող է վտանգի տակ դնել մեր երկրի անվրտանգութիւնն ու մեր երեխաների բարեկեցութիւնը:

Սա խնդրում եմ համարէք իմ խօսքի ամենաառանցքային ուղերձը:

Ես շնորհակալութեամբ եւ մեծ պատասխանատւութեամբ եմ ստանձնում համա-Շ.Մ.Ը.Մ.ական 9-րդ խաղերի պատուաւոր նախագահի իմ պարտականութիւնները: Վստահեցնում եմ, որ այսուհետ ես կ'անեմ ամէն ինչ՝ համահայկական հնչեղութեան ցանկացած գաղափարի իրականացման համար:

Բոլոր մարզիկներին, մարզիչներին, մրցավարներին մաղթում եմ ազնիւ պայքար, արդար մրցակցութիւն:

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ
Շ.Շ. Ողիմպիական Կոմիտէի Նախագահ



չրջանի պատուիրակութիւն իր ներկայութիւնը յայտնեց իրեն յատուկ կանչով մը: Սրահը թնդաց «Հ.Մ.Ը.Մ.-Հ.Մ.Ը.Մ.» բազմալեզու բացազանջութիւններով, միութենական կանչերով ու երգերով:

Աւարտին, ներկայ մարզիկ-մարզիկուհիներուն փոխանցուեցաւ ութօրեայ մարզախաղերու յայտագիրը, դաշտերու եւ մրցումներու պատկերը, ինչպէս նաեւ՝ բացման հանդիսութեան վերաբերող մանրամասնութիւններ:

**ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՀԱԻԱՔ՝
ՕԳՏԱՇԱՏ ԵՐԿՈՒ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզա-

խաղերը, նախորդին նման, ունեցան դաստիարակչական բաժին: Մարզախաղերու 6-րդ օրը, կէսօրին, նախքան Ծիծեռնակաբերդ այցելութիւնը, բոլոր մարզիկ-մարզիկուհիները, մարզիչներն ու պատասխանատուները հաւաքուեցան «Մարիթ» պանդոկի սրահներէն մէկուն մէջ եւ ընդունեցին երկու հիւր դասախօսներ:

Ցեղասպանութեան թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեան փառլոր փոյնթով ներկաներուն խօսեցաւ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի անցեալին,

ներկային ու ապագայի ծրագիրներուն մասին, իսկ Շուշիի առանձնակի գումարտակի նախկին փոխ հրամանատար Հարմիկ Յովսէփեան ներկայացուց «Հ.Յ. Դաշնակցութեան դերակատարութիւնը Արցախեան պայքարին» նիւթը:

Դաստիարակչական հաւաքը վարեց եւ հիւր դասախօսները ներկայացուց կեդրոնական մարզական յանձնախումբի անդամ եղբ. Սեւակ Կարապետեան:



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 9-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՓԱՌԱԲՈՐ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

2 որս տարի առաջ Հ.Մ.Ը.Մ.ական երազ մըն էր, որ իրականացաւ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8-րդ մարզախաղերու Հայաստանի մէջ կազմակերպումով:

Չորս տարի ետք, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը կոչուած էին այլ նուաճում մը արձանագրելու միութեան 95-ամեայ պատմութեան մէջ: Մարզախաղերը, իրենց պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, կը վայելէին Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէին հովանաւորութիւնը, ինչ որ մեծագոյն գնահատանքը կը հանդիսանար Սփիւռքի «մարզական նախարարութեան» նկատմամբ:





Հովանաւորութիւնը միայն նիւթական աջակցութեամբ չէր, այլ՝ Սփիւռքի նախարարութեան կից կազմութեամբը պետական յանձնաժողովի մը, որուն մաս կը կազմէին խաղերու առնչակից մարզական եւ ապահովական մարմիններու ներկայացուցիչները, ինչ որ յաւելեալ վկայութիւն մը կու տար հայրենի պետութեան կողմէ մարմնակրթական այս մեծ միութեան հանդէպ ցուցաբերուած յարգանքին, վստահութեան եւ հաւատքին:

Այս բոլոր երեւոյթներուն պերճախօս վկան հանդիսացաւ մարզախաղերու բացման փառաւոր հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 27 Յուլիսի երեկոյեան, Երեւանի «Ազատութեան» հրապարակին վրայ, ներկայութեամբ 653 մարզիկ-մարզիկուհիներու, բազմատասնեակ պատասխանատուներու, հիւրերու եւ աւելի քան 25 հազար հանդիսականներու:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԶԱՀԻՆ ԲՈՑԱՎԱՌՈՒՄԸ «ԷՐԵՒՈՒՆԻ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու պաշտօնական բացումը սկիզբ առաւ երեկոյեան ժամը 6.30-ին, մարզախաղերու ջահի բոցավառման հանդիսաւոր արարողութեամբ, որ տեղի ունեցաւ «Էրեբունի» թանգարանի մուտքին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեանի, Միհրան Շիմշիրեանի, Հրաչ Մեսրոպեանի, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանի, մարզական կեդրոնական յանձնախումբի ատենապետ Մանուէլ Մարսէլեանի եւ մարզախաղերու մասնակից 17 շրջաններէն 34 ջահակիր մարզիկ-մարզիկուհիներու:

Արարողութեան խօսք առաւ եւ ջահակիր մարզիկ-մարզիկուհիները ողջու-

նեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան: Ան յայտնեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու ջահը կը բոցավառի 28 դար առաջ հայոց քաղաքակրթութեան օրրանը հանդիսացած Էրեբունի քաղաքէն եւ կ'ուղղուի դէպի «Ազատութեան» հրապարակ: Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնն է այդ, քաղաքակրթութեան ջահակիրը դառնալ եւ միշտ ազատութեան ձգտիլ ու հասնիլ, ընդգծեց եղբ. Շիմշիրեան:

Մարզախաղերու ջահը վառեց Հ.Մ.Ը.Մ.ական երէց եղբայր, մարաթոն վազքի երկարամեայ ախոյեան եղբ. Լեւոն Թաշճեան: Եղբօր հետեւեցան մարզախաղերու մասնակից երկիրներէն 33 մարզիկ-մարզիկուհիներ, որոնք ջահը փոխն ի փոխ փոխանցելով վազեցին «Էրեբունի» թանգարանէն Էրեբունի փողոց, ապա ուղղուեցան դէպի Արցախի փողոց, այնուհետեւ՝ Տիգրան Մեծ



փողոց, Խանջեան փողոց, Թումանեան փողոց, հասնելու համար մինչեւ «Ազատութեան» հրապարակ:

ԲԱՅՈՒՄԸ


Բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Երեկոյեան ժամը 8-ին, Երեւանի «Ազատութեան» հրապարակին վրայ եւ ուղղակի հեռասփռումով ներկայացուեցաւ համայն հայութեան:

Հանդիսութեան բացումը կատարելով, հանդիսավար Մամիկոն Սիմոնեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ հրաւիրեց Արարատեան Թեմի Առաջնորդի ներկայացուցիչ՝ Արաբկիր համայնքի հոգեւոր հովիւ Բաբգէն Քհնյ-Հայրապետեանը, որ Տէրունական աղօթքով օրհնեց ներկաները: Ապա, Սիմոնեան ամփոփ կերպով ներկայացուց համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերու պատմականը, որմէ ետք ան բեմ հրաւիրեց կեդրոնական մարզական յանձնա-

խումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանը, Հ.Մ.Ը.Մ-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմալոնեանը, Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ վահան Յովհաննիսեանը, Սփիւռքի նախարարութեան անձնակազմի ղեկավար Ֆիրտոս Զաքարեանը եւ Հայաստանի Ողիմպիական Կոմիտէի նախագահ ու համա-Հ.Մ.Ը.Մ-ական 9-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ, Հայաս-

տանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանը: Ան նաեւ բեմ հրաւիրեց նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան անդամ եղ-





ւազով մարզախաղերու մարզիկ-մարզիկուհիները «Հիւսիսային» պողոտային տողանցեցին մինչեւ «Ազատութեան» հրապարակ: Այսպէս, հիւրընկալ Հայաստանի կողքին, իրենց երկրի դրօշներով եւ խանդավառ բացազանչու թիւններով հրապարակ մուտք գործեցին Աւստրալիայէն, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն, Գանատայէն, Հարաւային Ամերիկայէն, Լիբանանէն, Սուրիայէն, Գահիրէէն, Երուսաղէմ-Հայֆա-Եաֆայէն, Փարիզէն, Լոնտոնէն, Պուլկարիայէն, Կիպրոսէն, Պաղատսէն, Քուէյթէն եւ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութենէն ժամանած 653 մարզիկներ, մարզիչներ եւ վարչական պատասխանատուներ: Տողանցքին իրենց մասնակցութիւնը բերին Համազգայինի ուսանողական Ֆորումին մասնակիցները:

Մարզիկներու տողանցքին յաջորդեց Հայաստանի, Հ-Մ-Լ-Մ-ի եւ համա-Հ-Մ-Լ-Մ-ական Ծրդմարզախաղերու դրօշակակիր սկաուտներուն մուտքը հրապարակ:

Հնչեցին Հայաստանի եւ Հ-Մ-Լ-Մ-ի քայլերգները, որոնցմէ ետք ընթացք առաւ հանդիսութեան խօսքերու պաշտօնական բաժինը:

ԽՕՍՔԵՐԸ

Առաջին խօսքը արտասանեց մարզական կեդրոնական յանձնախումբի անդամ եղբ. Մանուէլ Մարսէլեան: Ան բարի գալուստ եւ յաջողութիւն մաղթեց բոլորին, ցանկալով որ մարզախաղերը կ'աւարտին դրական յիշատակներով:

Հ-Մ-Լ-Մ-Հ-Ա-Ս-Կ-ի վարչութեան ատենապետ Հրաչ Շմաւոնեան իր ուրախութիւնը յայտնեց 653 մարզիկ-

մարզիկուհիներ մէկտեղուած տեսնելով Հայաստանի մէջ: Ան նշեց, որ այսօր տօն է Հ-Մ-Լ-Մ-ի մեծ ընտանիքին համար: Բոլորը ոգեւորուած են Հայաստանի մէջ հիւրընկալելով սփիւռքահայ իրենց քոյր-եղբայրները, եւ ամէն ճիգ ի գործ դրած են մարզախաղերը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Եղբ. Շմաւոնեան նշեց, որ իւրաքանչիւր յաղթանակ կը նկատուի բոլորին յաղթանակը:

Հ-Մ-Լ-Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան իր խօսքին մէջ յայտնեց, որ մարզախաղերը աննախընթաց են թէ՛ մասնակից երկիրներու եւ թէ՛ մարզիկ-մարզիկուհիներու թիւով: Ան նշեց, որ մարզախաղերը աննախընթաց են նաեւ անոր համար, որ ան առաջին անգամ ըլլալով կը վայելեն հայրենի պետութեան հոգածութիւնն ու գուրգուրանքը, որուն համար մեծապէս շնորհակալ է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Եղբ. Մկրտիչեան շնորհակալական իր խօսքը փոխանցեց Սփիւռքի նախարարութեան աջակցութեան եւ մանաւանդ Հայաստանի Ազգային Ոլիմպիական Կոմիտէի մարզախաղերու օժանդակութեան համար: Ան շնչեց երիտասարդութեան գործօն դերակատարութեան անհրաժեշտութիւնը, որ եռանդ եւ յոյս պիտի ներշնչէ մեր ժողովուրդին: Եղբայրը իր խօսքը եզրափակեց շնչեղով, որ մարզախաղերու մեծագոյն յաղթականը, անկասկած, պիտի ըլլայ Հայաստանը, որ 8 օրեր շարունակ իր գերիւր պիտի բանայ Հ-Մ-Լ-Մ-ի մարզական «կամաւոր բանակ»ին (եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 8):

Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Վահան Յով-



հաննիսեան ողջունեց բոլորը եւ բարի գալուստ մաղթեց մայրաքաղաք Երեւան: Ան ըսաւ, որ մարզախաղերու բացման հանդիսութիւնը կը գուրգուրուի 27 Յուլիսին, որ կը նշէ Լիպտոնի հերոսական գործողութեան 30-ամեակը: 30 տարի առաջ 5 անձնուրաց երիտասարդ-

ներ իրենց կեանքերը զոհաբերեցին հայրենիքի արդար դատին ի խնդիր: Ան նշեց, որ այսօր, Հ-Մ-Լ-Մ-ական յանձնառու երիտասարդութիւնը նոյն տեսիլքով եւ յանձնառութեամբ լծուած է հայապահպանման պայքարին: Յովհաննիսեան բարի երթ մաղթեց մարզա-

խաղերուն եւ նշեց, որ մասնակից մարզիկները Հայաստանի ղեսպանները պէտք է դառնան իրենց երկիրներուն մէջ, որ պէտքի միասնաբար բոլորս ունենանք ապագայ երջանիկ Հայաստան:

Սփիւռքի նախարարութեան անձնակազմի ղեկավար Ֆիրտուս Զաքարեան ընթերցեց Սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեանի խօսքը, որ կ'ողջունէր բոլորը Հայաստանի մէջ ու կը շեշտէր, որ Հ.Մ.Ը.Մ. ըՍփիւռքի մէջ, օտար ասփերու վրայ լայնածաւալ ձեռնարկներ կը կազմակերպէ հայեցի դաստիարակութիւն փոխանցելու համար հայ երիտասարդութեան: Յակոբեան իր նամակին մէջ կը մաղթէր, որ բոլորը լատպաւորութիւններով կ'աւարտեն մարզախաղերը ու միշտ վերադառնան Հայաստան, որովհետեւ Հայաստանը կը սպասէ բոլորին:



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻ ԵՒ ԻՐԱՒԱՐԱՐԻ ԵՐԴՈՒՄԸ
Ապա, տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մասնակից մարզիկներու եւ իրաւարարներու երդումը՝ քոյր Նարէ Խլղաթեանի (Հ.Մ.Ը.Մ. -Հ.Ա.Ս.Կ.) եւ եղբ. Անդրանիկ Փա-

նոյեանի (Հ.Մ.Ը.Մ. Աւստրալիա) կողմէ:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԽՕՍԲԸ

Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահ եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զ-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Գագիկ Ծառուկեան գոհունակութեամբ ողջունեց բոլորը եւ նշեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը մեծ իրադարձութիւն են ու կարելոր միջոց՝ համահայկական գաղափարներու տարածման համար: Ան աւելցուց, որ մասնակիցները հիւրեր չեն, որովհետեւ անոնք կը գտնուին իրենց տան ու հայրենիքին մէջ: Ծառուկեան իր բերկրանքը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. մարզախաղերը կը կազմակերպէ Հայաստանի մէջ, ինչ որ յաւելեալ հեղինակութիւն եւ պատմական նշանակութիւն կու տայ ձեռնարկին:

Ծառուկեան հաստատեց նաեւ, որ մարզախաղերը կը կատարուին ղժուար պայմաններու մէջ: Հայաստանի մէջ կան բազմաթիւ մտահոգիչ խնդիրներ եւ չլուծուած հարցեր: Եւ նման նախաձեռնութիւններու շնորհիւ կարելի կը դառնայ ժողովուրդի ոգին բարձր պահել: Նման ձեռնարկները մեզ եւ աշխարհին կ'ապացուցեն, որ հայ ժողովուրդի միասնականութեան պարագային անյաղթահարելի որեւէ խնդիր չի մնար:



ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԶԱՀԻ ԲՈՅԱՎԱՌՈՒՄ

Խօսքերու աւարտին, «Ազատութեան» հրապարակ մուտք գործեց «էրբունի» թանգարանէն ճամբայ ելած Զ-րդ մարզախաղերու ջահը, որուն վերջին ջահակիրը հանդիսացաւ փինկփոնկի Լիբանանի եւ արեւմտեան Ասիոյ ախոյեան, 2012-ի ողիմպիական խաղերու մասնակից քոյր Դուլին Մունջօղլեան: Մունջօղլեան իր ջահով բոցավառեց հրապարակին մէջ կանգնեցուած մարզախաղերու կեդրոնական ջահը, որմէ ետք Գագիկ Ծառուկեան ազդանշանը տուաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու բացման:







ՏՕՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ

Հանդիսութեան յաջորդեց տօնական համերգ մը, մասնակցութեամբ Հայաստանի ազգային նուագարաններու պետական համոյթին եւ հայրենի արուեստագէտներ Վարդան Պատալեանի, Լէյլա Սարիբէկեանի, Մակիչի (Մկրտիչ Մկրտիչեան), Դաւիթ Ամալեանի, Արսէն-Մըրրօ Գրիգորեանի, Հայկոյի, Լիլիթ Յովհաննիսեանի, Արամէի եւ Սիլվա Յակոբեանի:

Հանդիսութիւնը վերջ գտաւ երեկոյեան 10.30-ին, Հ.Մ.Լ.Մ-ի մարզական նոր յաջողութիւնը աւետող լուսազարդ հրավառութեամբ:







ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՐԺԱՆԱԴԱՏՈՒՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԴՊՆԴՄԱՆ ՀԶՕՐ ԱԶԴԱԿ

Հայաստանի Ազգային Սկսուտական Կազմակերպության վարչութիւնը մեծ պատրաստակամութեամբ ու ոգեւորութեամբ ընդունեց համա-Շ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղերն արդէն երկրորդ անգամ քաղաքամայր Երեւանում կազմակերպելու ու անցկացնելու իրողութիւնը: Դժուար է թերագնահատել այս լայն տարողութեամբ ազգանպաստ ձեռնարկման կարեւորութիւնն աշխարասփիւռ հայ ժողովրդի համար, քանի որ այն նպատակ ունի ոչ միայն նպաստելու երիտասարդների ֆիզիքական դաստիարակութեանը, այլեւ խթանելու մայրենիի պահպանումը, տարածումը, սփիւռքահայ սերունդների հայեցի դաստիարակութեան ու լեզուամտածողութեան արմատաւորումը, Հայրենիք-Սփիւռք դարաւոր կապերի պահպանումն ու զարգացումը:

Կասկածից վեր է, որ համահայկական նման միջոցառումները ստեղծում են այնպիսի հիմքեր, որոնք ամրապնդում են հայ երիտասարդի ձգտումը՝ պահպանել ինքնութիւնն ու համազգային արժէքները, աշխարհի որ ծայրում էլ որ նա բնակուի: Ի յանդերձ դրան՝ մարզախաղերն աւանդաբար հիանալի հնաւորութիւն են հանդիսանում երիտասարդների շփման, միմիանց վարք ու բարքի հետ

ծանօթանալու, նոր ընկերներ ձեռք բերելու եւ իրենց հայկականութիւնը վերահաստատելու համար:

Վստահաբար հայրենի հողը խանդավառութեան, ազգին ու հայրենիքին ծառայելու պատրաստակամութեան մի նոր ալիք կը հաղորդի առաջինը Ձեզ, սիրելի՛ մարզիկներ, ինչպէս նաեւ միասնականութեան զօրեղ ոգով կը տոգորի հիւրերին եւ համակիրներին:

Հայաստանի Ազգային Սկսուտական Կազմակերպութիւնը հպարտ է իր համեստ ներդրումն ունենալու համա-Շ.Մ.-Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերի կազմակերպման ու անցկացման մէջ եւ մաս կազմելու այս միջոցառման, որ կրում է համազգային սիրոյ ու միասնականութեան խորհուրդը: Վստահ ենք, որ մարզախաղերը հզօր ազդակ կը հանդիսանան հայ ժողովուրդի ազգային արժանապատուութեան ամրապնդման եւ Սփիւռքի մեր հայրենակիցների հետ կապերի սերտացման համար:

Ուստի բարի՛ երթ եւ միայն յաղթանակներ:

Շ.Մ.-Ը.Մ.-Ը.Մ.Կ.Ի
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



**ԵՐԱԽՏԱՇԱՏ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՄԵՏԱԼՆԵՐՈՒՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ՝
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Թ-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ
ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐՆ ՈՒ ՄԱՐԶԻԿՈՒՀԻՆԵՐԸ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու գլխավոր նորություններն հանդիսացան երախտաշատ միութենականներու անունով պատրաստուած ոսկե մետալները, որոնք շնորհուեցան իւրաքանչիւր մարզախաղի լաւագոյն մարզիկին ու մարզիկուհիին:
Այսպէս, 16 դէմքերու անուններով մետալներու արժացան հետեւեալ մարզիկ-մարզիկուհիները.-



Եղբ. Նարեկ Նաճարեան (Լիբանան)՝ Վարուժան Մուրատեանի անուան ճատրակի լաւագոյն մարզիկի մետալ:



Քոյր Դալար Մազլունեան (Գահիրէ)՝ Պարգեւ Պարսամեանի անուան թենիսի լաւագոյն մարզիկուհիի մետալ:



Եղբ. Վահագն Թոնաքանեան (Գանատա)՝ ճորճ Տաղլեանի անուան թենիսի լաւագոյն մարզիկի մետալ:



Քոյր Դուլին Մունջուլեան (Լիբանան)՝ Կարօ Թիւրքմենեանի անուան փինկ-փոնկի լաւագոյն մարզիկուհիի մետալ:



Սերժ Կեօքճեան (Լիբանան)՝ Յովհաննէ Տէր Յարութեանի անուան աթլէթի լաւագոյն մարզիկի մետալ:



Քոյր Ժենիա Յովհաննիսեան (Հ.Ա.Ս.Կ.)՝ Գէորգ Կարապետեանի անուան վոլիպոլի լաւագոյն մարզիկուհիի մետալ:



Եղբ. Խաժակ Սինանեան (Ֆրանս)՝ Վարդան Բախշեանի անուան լաւագոյն ֆութպոլիստի մետալ:



Շարիս Դազերի (Արեւմտ. Մ. Ն.)՝ Սուրեն Նազարեանի անուան պասքեթպոլի լաւագոյն կրտսեր մարզիկուհիի մետալ:



Եղբ. Միսաք Պոյաճեան (Լիբանան)՝ Յարութիւն Գազանճեանի անուան փինկ-փոնկի լաւագոյն մարզիկի մետալ:



Քոյր Սերլի Մուշեղեան (Սուրիա)՝ Սուրեն Մուրատեանի անուան լողի լաւագոյն մարզիկուհիի մետալ:



Եղբ. Փիթըր Մանուշակեան (Արեւմտ. Մ. Ն.)՝ Վարդգէ Յայրապետեանի անուան լողի լաւագոյն մարզիկի մետալ:



Քոյր Լուի Թաշճեան (Լիբանան)՝ Յովհաննէ Շահինեանի անուան աթլէթի լաւագոյն մարզիկուհիի մետալ:



Թեօ Դաւիթեան (Արեւմտ. Մ. Ն.)՝ Ժիրայր Պոյաճեանի անուան պասքեթպոլի լաւագոյն կրտսեր մարզիկի մետալ:



Կասիա Սարգիս (Արեւմտ. Մ. Ն.)՝ Երուանդ Տէմիրճեանի անուան պասքեթպոլի լաւագոյն մարզիկուհիի մետալ:



Նարպէյ Աբրահամեան (Արեւմտ. Մ. Ն.)՝ տղքք. Միսաք Արզումեանեանի անուան պասքեթպոլի լաւագոյն մարզիկի մետալ:



Անդրանիկ Փանոյեան (Աւստ.)՝ Վարդգէ Տէր Կարապետեանի անուան մարզախաղերու տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի մետալ:

ԴԷՊԻ ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ
 Ըայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան,

Ըայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը իր սփիւռքեան եւ հայրենի միաւորներու բազմահազար անդամներով, հրձուանքով ու հպարտութեամբ կ'ողջունէ հայրենի հողին վրայ, Երեւանի մէջ տեղի ունեցող ձեր 9-րդ համա-Շ.Մ.Ս.ական մարզախաղերը:

Ձրդարեւ, հայ ժողովուրդի անկախ պետականութեան հետ, իննսուհինգ տարիներ առաջ, նուիրեալ հայորդիներու ջանքերով ծնունդ առած հայ պատանի եւ պարմանի արիներու եւ արեւոյշներու այս սքանչելի կազմակերպութեան ելոյթը մեր վերազարթնող Ըայրենիքի սրտին վրայ վերանորոգ աւիւնով կը լեցնէ հարիւրամեայ տուայտանքներու աւիշող սնած ՇՕՄ-ուհիի մեր սրտերը եւս:

Երկար է ու սրտապնդիչ Շ.Մ.Ս.ի կտրած ձանապարհը, տասնամեակներ ամբողջ հասնելով աշխարհի չորս անկիւնները ապաստան գտած համասփիւռ հայութեան բեկորներուն, բարձրանալով ու բարձրացնելով մանուկներու, պատանիներու եւ տարեցներու սրտերն ու հոգիները, բարոյականն ու ֆիզիքականը՝ կարգապահ ու կշռուած քայլերով ցոյց տալով ձամբան դէպի նոր բարձունքներ, դէպի պայծառ ապագայ:

Ըայ ժողովուրդի վերապրելու կամքէն ծնունդ առած Շ.Մ.Ս.ական փաղանգներու դրօշը անգամ մը եւս կը ծածանի հայոց անկախ Ըայրենիքի մայրաքաղաքին ազատ երկինքին տակ, ներշնչելով ու խրախուսելով աշխարհի չորս ծագերէն հաւաքուած պատանի ու երիտասարդ հայ մարզիկներ, մրցելու եւ նորանոր բարձունքներու հասցընելու ներկայ ու գալիք սերունդներու կամքն ու հայաշունչ տեսլականը:

Նորանոր յաջողութիւններու ամենաջերմ մաղթանքներով

ՇԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ ՇԱՄԱ-Շ.Մ.Ս.-ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ

Ըայաստանի Ըանրապետութեան գոյառումէն ետք, հայ երիտասարդական տարբեր կազմակերպութիւններ, անսալով իրենց հայակերտումի նպատակներուն եւ հայրենասիրական զգացումներուն, իրենց համախմբումները բնական ընթացքով մը կեդրոնացուցին Մայր Ըայրենիքի մէջ: Վերջին քսանամեակին Ըայաստանի հետ Սփիւռքի կապը աւելի եւս ամրացաւ, երբ անկախացած հայրենիքը սկսաւ աշխարհացրիւ սփիւռքահայ երիտասարդներն ու պատանիները հիւրընկալել իր հողին վրայ:

95 տարուան մարմնակրթական բեղուն գործունէութիւն ունեցող Շ.Մ.Ս.ը բնականաբար ինք եւս պիտի հանդիսանար այն ռահվիրաներէն, որոնք Ըայաստանի անկախացումէն ետք հայրենի հողը պիտի դարձնէին իրենց հաւաքակեդրոնը:

Ըամա-Շ.Մ.Ս.ական բանակումներէն ետք, համա-Շ.Մ.Ս.ական մարզախաղերը, «Բարձրացի՛ր-բարձրացուր»-ի հրամայականով առաջնորդուած, հայրենի հողին վրայ ի մի կը խմբեն Շ.Մ.Ս.ական երիտասարդութիւնը եւ անոնց կ'ընծայեն հոյակապ կարելիութիւնը թէ՛ իրարու հետ ըլլալու, իրարու մերուելու եւ իրարմով հզօրանալու, թէ՛ սփիւռքահայ մարզիկներուն եւ մարզիկուհիներուն պարագային, հայրենիքին ծանօթանալու եւ հայրենի հողէն, երկրէն ու տարերքէն ներշնչելու եւ անոնցմով գօտեպնդուելու:

Տարիներ առաջ ընթացք առած այս մարզախաղերը, վստահաբար, փայլուն նոր էջեր պիտի արձանագրեն Շ.Մ.Ս.ի պատմութեան մէջ:

Յաջողութիւն մասնակցող բոլոր մարզիկներուն եւ մարզիկուհիներուն:

Յաջողութիւն եւ նորանոր յաղթանակներ Շ.Մ.Ս.ի աշխարհատարած մեծ ընտանիքին:

ՇԱՄԱՋԳԱՅԻՆԻ ՇԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Թ-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱԺԱԿԱԿԻՐ ԽՈՒՄԲԵՐԸ

ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

- «ԶԱԲԵՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ»
ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿ
Ա. Ֆրանս
Բ. Արեւմտ. Մ.Ն.
Գ. Լիբանան
- «ԳԵՂԱՄ ՍԻՍԵՆԵԱՆ»
ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԵՐԵՑ
ԱՂՋԿԱՆՑ ԲԱԺԱԿ
Ա. Արեւմտ. Մ.Ն.
Բ. Յ.Ս.Ը.Մ.-Յ.Ա.Ս.Կ.
Գ. Լիբանան
- «ԳԵՂԱՄ ՍԻՍԵՆԵԱՆ»
ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԿՐՏՍԵՐ
ԱՂՋԿԱՆՑ ԲԱԺԱԿ
Ա. Արեւմտ. Մ.Ն.
Բ. Լիբանան
Գ. Քուեյթ
- «ԳԵՂԱՄ ՍԻՍԵՆԵԱՆ»
ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԵՐԵՑ ՏՂՈՑ ԲԱԺԱԿ
Ա. Արեւմտ. Մ.Ն.
Բ. Արեւել. Մ.Ն.
Գ. Յ.Ս.Ը.Մ.-Յ.Ա.Ս.Կ.
- «ԳԵՂԱՄ ՍԻՍԵՆԵԱՆ»
ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԿՐՏՍԵՐ ՏՂՈՑ ԲԱԺԱԿ
Ա. Արեւմտ. Մ. Ն.
Բ. Արեւել. Մ.Ն.
Գ. Լիբանան
- ՎՈՒՊՈՒԼԻ ԱՂՋԿԱՆՑ ԲԱԺԱԿ
Ա. Յ.Ս.Ը.Մ.-Յ.Ա.Ս.Կ.
Բ. Արեւել. Մ.Ն.
Գ. Արեւմտ. Մ.Ն.
- ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԲԱԺԱԿ
Լիբանան
- ՃԱՏՐԱԿԻ ԲԱԺԱԿ
Լիբանան
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԽՈՐՄԱՆ
ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՇՐՋՈՒՆ ԲԱԺԱԿ
Լիբանան



Ութօրեայ մրցակցութեանէ ետք, 36 խումբերու եւ 653 մարզիկ-մարզիկուհիներու համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզական ճակատումները իրենց աւարտին հասան Շաբաթ, 3 Օգոստոսի յետմիջօրէին, Երեւանի «Միկա» պասքեթպոլի դաշտին վրայ կազմակերպուած փակման հանգիստւոր արարողութեամբ, որուն ներկայ գտնուեցան Հայաստանի Ազգային Ոլիմպիական Կոմիտէի նախագահի ներկայացուցիչ Կոմիտէի քարտուղար Հրաչ Ռուստամեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Միհրան Շիմշիրեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Հրաչ Սիսեռեան, Հրաչ Մեսրոպեան, Արմէն Կէտիկեան, Բագրատ Եսայեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պատասխանատուները:

Հանդիսութեան ազդանշանը տուաւ

ՓՈՒՍՏԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆԸ ԿԸ ԹԱԳԱԴՐԷ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Թ-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՇՐՋՈՒՆ ԲԱԺԱԿՈՎ

Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ.ի եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թ-րդ մարզախաղերու դրօշակակիր սկաուտներուն դաշտ մուտքը: Այնուհետեւ, դաշտ մուտք գործեցին մարզախաղերու մասնակից 16 շրջաններու եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ի մարզիկ-մարզիկուհիները, որոնք հիւրերու առջեւ տողանցելէ ետք բարձրացան թրիպիւններուն մէջ իրենց համար նախատեսուած տեղերը, մինչ իւրաքանչիւր պատուիրակութեանէ դրօշակակիր մը եւ ներկայացուցիչ մը տեղ գրաւեցին դաշտին կեդրոնը՝ պատրաստուելով հանդիսութեան պաշտօնական բաժինին: Դաշտին մէջ իրենց տեղը գրաւեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մարզախաղերու օժանդակ մարմնի սկաուտները:

Հանդիսութեան պաշտօնական բացումը կատարելով, մարզախաղերու կազմակերպիչ մարմնի անդամ եղբ. Սեւակ Կարապետեան շնորհակալութիւն յայտնեց հայրենի մարզական ֆետերասիոններուն եւ Հայաստանի Ազգային Ոլիմպիական Կոմիտէին, որոնք որեւէ օժանդակութիւն չզլացան խաղերու յաջողութեան համար:

Խօսքեր արտասանեցին Հայաստանի Ազգային Ոլիմպիական Կոմիտէի քարտուղար Հրաչ Ռուստամեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան:

Հայաստանի Ազգային Ոլիմպիական Կոմիտէի քարտուղարը համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը նկատեց Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման միջոց եւ մաղթեց, որ չորս տարի ետք Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկները դարձեալ իրարու հանդիպին հայրենիքի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան



գախաղերու յաջողութեան համար աշխատած Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտական օժանդակ յանձնախումբը եւ Հայաստանի ոստիկանութիւնը, որոնք ջանք չխնայեցին մարզիկներուն հանգստութիւնը եւ ապահովութիւնը երաշխաւորելու համար:

Խօսքերէն ետք տեղի ունեցաւ լաւագոյն մարզիկներու եւ ախոյեաններու մրցանակաբաշխութիւնը:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, եղբ. եւ քոյր Հրաչ եւ Էլիզապէթ Սիսեռեաններու մտայնացումով եւ հովանաւորութեամբ, իւրաքանչիւր մարզախաղի լաւագոյն մարզիկին շնորհուեցաւ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականի անունով մրցանակ մը՝ յուշանուէրի ձեւով:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Հրաչ Սիսեռեանի ձեռամբ 16 յուշանուէրներու արժանացան ճատրակի տղոց, թենիսի, փինկփոնկի, լողի, աթլէթի տղոց ու աղջկանց լաւագոյն մարզիկները, վոլիպոլի լաւագոյն մարզիկուհին, ֆութպոլի կրտսեր եւ երէց տղոց լաւագոյն մարզիկները, պասքեթպոլի տղոց ու աղջկանց կրտսեր եւ երէց տղոց ու աղջկանց լաւագոյն մարզիկները, ինչպէս նաեւ՝ մարզախաղերու տիպար Հ.Մ.Ը.Մ.ականը (մրցանակակիրներուն ցանկը տեսնել էջ 42-43):

Լաւագոյն մարզիկներու պարգեւատրումին յաջորդեց մարզախաղերու ախոյեաններու բաժակներուն տուչութիւնը: Այսպէս՝

Ճատրակի առաջնութեան բաժակին տիրացաւ Լիբանանը:

Թենիսի տղոց բաժակին արժանա-

թեան անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան յայտնեց, որ մարզախաղերու փակումով ոսկէ էջ մը կը փակուի միութեան պատմութեան մէջ: Ստեղծուած խանդավառութիւնը այժմ կը փոխադրուի շրջաններ, ուր մարզիկներ վերյիշելով իրենց ապրած գեղեցիկ յիշատակները,

պատմելով իրարու եւ քաջալերելով իրենց խմբակիցները, այժմէն պիտի պատրաստուին չորս տարի ետք տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան ողջունեց մար-



ցաւ Գանատայի շրջանը, մինչ աղջկանց ախոյեանութեան տիրացաւ Գահիրէն:

Փինկ-փոնկի ախոյեանութեան բաժակը խլեց Լիբանանը:

Լողի «Եղբ. եւ քոյր ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեան» բաժակին տիրացաւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ-ը:

Աթլէթի «Եղբ. եւ քոյր Ալեքքօ եւ Անի Պէզիբեան» բաժակին տիրացաւ Լիբանանը:

Վոլիպոլի աղջկանց մրցումներուն առաջին երեք դիրքերը գրաւեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Արեւելեան Միացեալ Նահանգներ եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներ:

Ֆուտբոլի «Զաւէն Տէր Պետրոսեան» բաժակներուն տիրացան Հ.Մ.Ը.Մ. Ֆրանս (առաջին), Արեւմտեան Միացեալ Նահանգներ (երկրորդ) եւ Լիբանան (երրորդ):

Պասքեթպոլի «Գեղամ եւ Ալիս Սիսեուեան» բաժակներուն արժանացան հետեւեալ 12 խումբերը:-

Կրտսեր աղջիկներ- Արեւմտեան Միացեալ Նահանգներ (առաջին), Լիբանան (երկրորդ) եւ Քուէյթ (երրորդ):

Կրտսեր տղաք- Արեւմտեան Միացեալ Նահանգներ (առաջին), Արեւելեան Միացեալ Նահանգներ (երկրորդ) եւ Լիբանան (երրորդ):

Երէջ աղջիկներ- Արեւմտեան Միացեալ Նահանգներ (առաջին), Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (երկրորդ) եւ Լիբանան (երրորդ):

Երէջ տղաք- Արեւմտեան Միացեալ Նահանգներ (առաջին), Արեւելեան Միացեալ Նահանգներ (երկրորդ) եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (երրորդ):

Բաժակներու տուչութիւնը կատարեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-



թեան անդամ եղբայրներ Բագրատ Եսայեան, Հրաչ Մեսրոպեան, Միհրան Շիմշիրեան, Արմէն Կէտիկեան, Գառնիկ Մկրտիչեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Հրաչ Սիսեուեան, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Ծորճ Տաքէսեան եւ փոքրիկն Արամ Քիլիճեան, որ իր մեծ

հօր եւ մօր անունը կրող լողի «Եղբ. եւ քոյր ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեան» բաժակը յանձնեց Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչին:

Արդիւնքներու հրապարակումէն ետք, յայտարարուեցաւ նաեւ մարզախաղերու առաւելագոյն յաղթանակներ



ըր արձանագրած շրջանին անունը: Հ.Մ.Ը.Մ. Լիբանան հոչակուեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու առաւելագոյն կէտեր շահած շրջանը եւ առ այդ ան տիրացաւ Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի տրամադրած շրջուն բաժակին: Լիբանան իլած էր 3 առաջնութիւն (ճատրակ, փինկ-փոնկ, աթլէթ), 1 երկրորդութիւն (կրտսեր աղջկանց պասքէթպոլ) եւ 3 երրորդութիւն (Ֆութպոլ, կրտսեր տղոց պասքէթպոլ եւ երէց աղջկանց պասքէթպոլ): Շրջուն բաժակը Լիբանանի պատուիրակութեան ներկայացուցիչին յանձնեց Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի քարտուղար Հրաչ Ռուստամեան:

Փակման հանդիսութիւնը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ չորս տարի ետք կրկին հանդիպելու խոստումով:

Թրիպլինները պարպուեցան մարզասէրներէ, սակայն դաշտը երկար ժամանակ յորդեցաւ յաղթական բաժակով ուրախացող Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մարզիկներով, որոնք հուռուաներով, շուրջպարերով եւ մարզական կանչերով ապրեցան միութենական բերկրանքի անմոռանալի պահեր:





«ՅԱՂԹԱՆԱԿՆ ԷՐ ՇԱՏ ՓԱՌԱԻՈՐ...»



ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ ՓԱՅԼՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՊՍԱԿԷ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Գ-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ



արաթ, 3 Օգոստոսի երեկոյեան, մարզախաղերու փակումէն ժամեր ետք, Արովեանի «Փարաւոն» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ-րդ մարզախաղերու յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը, ներկայութեամբ 1200 մարզիկ-մարզիկուհիներու, պատասխանատուներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու: Հիւրերու շարքին էին Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան:

Նի Ազգային Ողիմպիական Կոմիտէի քարտուղար Հրաչ Ռուստամեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան: Եղբ. Շմաւոնեան իր խօսքին մէջ անակնկալ մը ներկայացուց, երբ յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը որոշած է պարզեւտրել եղբայրներ Մանուէլ Մարսէլեանը (Արեւմտեան Մ. Նահանգներէն), Մանուկ Մանուկեանը եւ Աւետիս Պէրպլերեանը՝ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, Գերագոյն Մարմնի անդամ Աղուան Վարդանեան եւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի եւրոասիական բաժնի տնօրէն Եուրի Եմիլիան:

Ճաշկերոյթին ընթացքին ողջոյնի խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի քարտուղար Հրաչ Ռուստամեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան:





նի Ազգային Սկաուտական Կազմակերպություն իրենց ունեցած նպաստին համար: Այս առիթով, եղբ. Մարսելեան արժանացաւ «Ոսկէ շուշանածաղիկ» յուշամետալին, իսկ եղբայրներ Մանուկեան եւ Պէրպէրեան՝ «Վարդան Բախչեան» յուշամետալին:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ցտեսութիւն յայտնեց մարզախաղերու մասնակիցներուն եւ մաղթեց, որ 10 օրերու ընթացքին ստեղծուած խանդավառ մթնոլորտը մասնակիցները իրենց հետ կը տանին շրջաններ: «Հայաստանի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ-ական Զ-րդ մարզախաղերը Հ.Մ.Ը.Մ-ականութիւնը ապրելու եւ հայրենիքը ճանչնալու առիթ մը եղան, լաւ կ'ըլլայ որ նման առիթներ կրկնուին ու բազմանան», շեշտեց ան:

Իր կարգին, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչը ողջունեց համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերու մասնակիցները եւ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը մեր սիրելի միութիւնն է, մեր հարազատ կազմակերպութիւնը, ամէնէն մեծաթիւր իր անդամներու թիւով:

Շարունակելով, Մարգարեան հաստատեց. «Հ.Յ.Դ-ն Հայաստանի մէջ ընդդիմադիր կուսակցութիւն է, բայց Հայաստանի համար պատասխանատու կուսակցութիւն է: Հայաստանը բոլորին հայրենիքն է: Այսօրուան իշխանութիւնները որեւէ առնչութիւն չունին



վաղուան հայրենիքին հետ: Մենք կը խոստանանք ստեղծել այն Հայաստանը, ուր մարդիկ ոչ միայն կրնան այցելել, այլև՝ ապրիլ: Մենք պիտի ստեղծենք այն Հայաստանը, որ պիտի ըլլայ համայն հայութեան հայրենիքը»:

Խօսքերէն ետք ընթացք առին երգն ու պարը: Երեկոն խանդավառեցին հայրենի արուեստագէտներ Արսէն Գրիգորեան, Արտաշէս Ասլանեան, Լիաննա, Դաւիթ Ամալեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Մասունք» երգ-պարի համոյթը եւ սուրիահայ երգիչ Յովսէփ Գասպարեան: Մինչեւ ուշ ժամեր բացօթեայ ճաշարանը թնդաց Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդ սերունդի երգերով ու պարերով: «Յաղթանակն էր շատ փառաւոր...»: Շուրջպարեր, բերդ պարեր եւ բաժակով պարեր ստեղծեցին հոյակապ մթնոլորտ:

Խանդավառուած մթնոլորտէն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Սիսեռեան 25 հազար տողար նուիրեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին:

Երեկոն եզրափակուեցաւ ազգային-հայրենասիրական երգերով:



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՑԵՂ ԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ


Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու ճ-րդ օրը, Հինգշաբթի, 1 Օգոստոսին, մարզախաղերու մասնակից մարզիկ-մարզիկուհիները եւ պատասխանատուները, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու առաջնորդութեամբ, յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Հայկական Յեղասպանութեան նահատակներու յիշատակին:

Յետմիջօրէի ժամը 3-ին, 653 մարզիկ-մարզիկուհիներ ուղղուեցան Ծիծեռնակաբերդ, ուր մէկական ծաղիկներով, կարգապահ եւ լուռ շարքերով տողանցեցին մինչեւ նահատակաց յուշարձան, որուն մուտքին, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան գետեղեց յարգանքի ծաղկեպսակ մը:

Այնուհետեւ, բոլորը մուտք գործե-

ցին յուշարձանի շրջափակէն ներս եւ ամենայն երկիւղածութեամբ իրենց ծաղիկները գետեղեցին մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակը յաւերժացրնող անմար կրակին շուրջ: Պահը տպաւորիչ էր: Շատեր կ'արտասուէին, ուրիշներ աղօթք կը մըմնջէին թուրքին եաթաղանին զոհ գացած իրենց հարազատներու յիշատակին: Ոմանք ալ անկիւն մը քաշուած կը խորհրդածէին ներամփոփ...

Ոգեշնչող այս մթնոլորտին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան լուսթեամբ յարգելու 1915-1923 զոհ գացած հայորդիներու յիշատակը: Տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ յիշատակ մէկուկէս միլիոն անմեղ զոհներու: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն





Աւագեան փոխանցեց օրուան պատգամը: Ան յայտնեց, որ աշխարհի ժողովուրդները եթէ տարուան մէջ Ապրիլ 24-ը մէկ անգամ կ'ապրին, հայ մարդիկ ամէն օր կ'ապրին, որովհետեւ 98 տարիէ անոնք կը կրեն Ապրիլ 24-ի Յեղասպանութեան հետեւանքները: Յեղասպանութիւնը սկսած է 1915-ին եւ կը շարունակուի մինչեւ այսօր՝ օտարացման, այլասերման եւ ձուլման ենթարկելով հայութեան լայն զանգուածները: Եղբ. Աւագեան հաստատեց, որ Ծիծեռնակաբերդ այցելելով Հ.Մ.-Ը.Մ.ական նոր սերունդը յարգանքի իր տուրքը կը մատուցէ իր նահատակներուն եւ այն բոլոր արժէքներուն, որոնց

համար ինկան անոնք: Այդ արժէքները հողն են, հայրենիքն են, լեզուն են, մշակոյթն են, սեփական ինքնութիւնն են:

Այսօր կը գտնուինք Ծիծեռնակաբերդի մէջ, շարունակեց Աւագեան, սակայն վստահ ենք, որ վաղը, միւս օր եւ մինչեւ մեր կեանքին վերջը Ծիծեռնակաբերդը պիտի ըլլայ մեր սրտին մէջ եւ անոր անմար ջահը վառ պիտի պահէ պահանջատիրական մեր եռանդը ազգային-միութենական մեր աշխատանքներուն մէջ՝ մինչեւ մեր վախճանական նպատակներուն իրականացումը, մինչեւ ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստանի կերտումը:

Պատգամէն ետք, յուշարձան այցելու

լուծիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով եւ շրջաններու պատուիրակութիւններու խմբային լուսանկարներով:

ԹԱՆԳԱՐԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՏՈՒԿ ԲԱՑԻԿՆԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ծիծեռնակաբերդ այցելուութեան երկրորդ հանգրուանը եղաւ Հայկական Յեղասպանութեան նուիրուած թանգարանը, ուր յատուկ արարողութեամբ տեղի ունեցաւ Շաւարշ Քրիսեանի յիշատակը յաւերժացնող բացիկներու հրապարակում:

Թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեան համա-Հ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղերու պատասխանատուները ընդունելով յայտարարեց, որ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերուն աւիթով, թանգարանը նախաձեռնած է Շաւարշ Քրիսեանի յիշատակին 1 Օգոստոս թուակիր 650 բացիկներու պատրաստութեան:

Ապա, տեղի ունեցաւ բացիկներու ստորագրութեան պաշտօնական արարողութիւն: Հայկ Դեմոյեան, Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եւ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու պատասխանատուները ստորագրեցին եւ կնքեցին 10 բացիկներ, որոնք նախատեսուած են հասցէագրուելու թանգարաններու եւ պաշտօնական անձնաւորութիւններու: Մնացեալ բացիկները բաժնուեցան Յեղասպանութեան թան-





գարան այցելող մարզիկ-մարզիկուհիներուն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆ ՀԱՅՎ ԴԵՄՈՅԵԱՆԻ ՀԵՏ

Մարզիկ-մարզիկուհիներու թանգարան այցելութեան ընթացքին, Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը հանդիպում մը ունեցաւ թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանի հետ:

Հանդիպումին ընթացքին Դեմոյեան ներկայացուց թանգարանի ընդարձակման ծրագիրները, Եղեռնի 100-ամեակի ոգեկոչման նախապատրաստութիւնները եւ հիւրերը պատուեց իր նորագոյն հրատարակութենէն մէկական օրինակ

նուիրելով: Հ.Մ.-Ը.Մ.ի պատուիրակութիւնը, իր կարգին, Դեմոյեանի փոխանցեց մարզախաղերու յուշանուէրը:

Հանդիպումէն ետք, Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրները այցելեցին Ցեղասպանութեան նահատակաց պուրակ, ուր Սեպտեմբեր 2008-ին կատարուած էր ծառատնկում եւ յուշատախտակի գետեղում՝ ի յարգանս Եղեռնի անմեղ զոհերուն, ի յիշատակ միութեան հիմնադրութեան 90-ամեակին:

Հ.Մ.-Ը.Մ.ի մարզական «բանակ»ն ու պատասխանատուները Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին հրաժեշտ տրւին իրենց այցելութիւնը անմահացնող յիշատակի նկարով մը:





8 Օգոստոս 2009, Երեւան, համա-
Հ.Մ.Ը.Մ.ական 8-րդ մարզա-
խաղերու ֆուլթայոլի աւարտա-
կան, մրցակիցներ՝ Արեւմտեան Մ. Նա-
հանգներ-Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս:

3 Օգոստոս 2013, Երեւան, համա-
Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու
ֆուլթայոլի աւարտական, մրցակիցներ՝
Արեւմտեան Մ. Նահանգներ-Ֆրանս:

Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ
չորս տարի ետք: Արդիւնքը եւս կը
կրկնուի՝ 3-2: Կը փոխուի սակայն ախոյ-
եանը: Հ.Մ.Ը.Մ. Ֆրանս կը շահի ֆուլթ-
պոլի համա-Հ.Մ.Ը.Մ.ական ախոյեա-
նութիւնը եւ կը տիրանայ «Զաւէն Տէր
Պետրոսեան» բաժակին:

Կը սպասուէր նման իրագործում մը:
Անակնկալ չէր: Նախորդ մարզախաղե-
րուն, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տղաքը, մար-
զիչ Աչոտ Խաչատրեանի հետ «փոթո-
րիկ» մը ստեղծած էին իրենց շուրջ, երբ
տպաւորիչ մրցումներու շարքէ մը ետք՝
հասած էին աւարտական եւ միայն եր-
կարած գումէ ետք տեղի տուած էին
Արեւմտեան Մ. Նահանգներու հօր
խումբին դէմ: Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կազ-
մը չորս տարի առաջ հանդիսացած էր
մարզախաղերուն ամէնէն շատ թիւով
կոլեր նշանակող կազմը (13 կոլ):

Չորս տարի ետք, մարզիչ Սահակ
Զաւուչի հետ, Խաժակ Սինանեան,
Շանթ Տարագճեան, Րաֆֆի Պաղտատ-
եան եւ խմբակիցներ դաշտ կը ներկայա-
նային շատ լուրջ պատրաստութիւննե-
րով եւ անգամ մը եւս տեղի չտալու
վճռակամութեամբ:

Իր կարգին, Արեւմտեան Մ. Նա-
հանգներ մարզախաղերուն կը ներկա-
յանար ամէն գնով տիտղոսը իր մօտ
պահելու տրամադրութեամբ: Համա-
Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու ֆուլթ-
պոլի երեք անգամ ախոյեանը (1985,
1993, 2009) երեք պիտի չուզէր կրկնել
2001-ի փորձառութիւնը, երբ կիսաւար-
տականին Լիբանանէն կրած անակնկալ
պարտութեամբ մը ան դուրս մնաց
ախոյեանութեան պայքարէն եւ Լիբա-
նան հասաւ աւարտական: Այդ տարի
Սուրիան տիրացաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ա-
կան ֆուլթպոլի ախոյեանութեան տիտ-
ղոսին, առաջնութեան բաժակը առաջին
անգամ ըլլալով փոխադրելով Միջին
Արեւելք:

Մեծերու ճակատում մըն էր, որ կը
սպասուէր ուրեմն:

Ա. Հանգրուանին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս
արձանագրեց 3 յաղթանակ եւ 1 հաւա-



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ Կ'ԵՐԹԱՅ ԵՒՐՈՊԱ

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍ ԱՄՈՅԵԱՆ

ՖՐԱՆՍԻ ՅԱՌԱՋԱՊԱՀ ԽԱԺԱԿ ՍԻՆԱՆԵԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈՒԼԻՍ

սարութիւն (Պուլկարիոյ դէմ): Ան նշանակեց 9 կոլ եւ ստացաւ նոյնքան: Կէտով մը գերազանցեց Լիբանանը, որ պարտուեցաւ իրմէ: Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս գրաւեց իր խմբակին առաջին դիրքը, Լիբանան՝ երկրորդ:

Արեւմտեան Մ. Նահանգներ եւս եղաւ անսխալ: Բ. խմբակին մէջ ան արձանագրեց 4 յաջորդական յաղթանակներ, նշանակեց 15 կոլ եւ ստացաւ 5 կոլ: Խմբակին անակնկալը հանդիսացաւ Երուսաղէմի կազմը, որ պարտութեան մատնեց Սուրիոյ եւ Գանատայի կազմերը, հաւասարութիւն մը արձանագրեց Արեւելեան Մ. Նահանգներու հետ եւ որք կոլով մը տեղի տուաւ Արեւմտեան Մ. Նահանգներու դէմ: Երուսաղէմ գրաւեց խմբակին երկրորդ դիրքը, Արեւմտեան Մ. Նահանգներ՝ առաջին:

Կիսաւարտականը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսն ու Երուսաղէմը

մէկ կողմէ եւ Լիբանանն ու Արեւմտեան Մ. Նահանգները միւս կողմէ: Երուսաղէմ դարձեալ մէկ կոլով պարտութիւն

մը կրեց, մինչ Լիբանան 3-1 արդիւնքով տեղի տուաւ Արեւմտեան Մ. Նահանգներու դէմ:





Երրորդ-չորրորդ դերքի մրցումին, վիրաւորներով հարուստ Երուսաղէմի կազմը դիւրին մրցակից մը եղաւ Լիբանանի, որ 4-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով տիրացաւ ախոյեանութեան երրորդ դերքին:

Հարկ է նշել, որ Ա. խմբակին մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս, Լիբանան, Քուէյթ, Հարաւային Ամերիկա եւ Պուկարիա, իսկ Բ. խմբակը բաղկացուցին Արեւմտեան Մ. Նահանգներ, Արեւելեան Մ. Նահանգներ, Գանատա, Սուրիա եւ Երուսաղէմ:

Մրցումները կատարուեցան «Փիւնիկ» ֆութպոլի ակումբի եւ ֆութպոլի ակադեմիայի մարզադաշտերուն վրայ:

Մրցումները ղեկավարեցին Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնին կողմէ տրամադրուած իրաւարարներ: Խաղերուն հսկողութիւնը կատարեց Հ.Մ.Ը.Մ.-ական վաստակաշատ մարզիկ ու մարզիչ Վաչէ Սարգիսեան:

24 մրցումներու ընթացքին նշանակուեցան 55 կոյեր, միջին հաշուով 2.29 կոյ իւրաքանչիւր մրցումի, ինչ որ նուազ է նախորդ մարզախաղերէն: 2009-ին, 16 մրցումի ընթացքին նշանակուած էր 39 կոյ, միջին հաշուով 2.43 կոյ իւրաքանչիւր խաղի, իսկ 2001-ին՝ 16 մրցումի ընթացքին նշանակուած էր 70 կոյ, միջին հաշուով 4.37 կոյ իւրաքանչիւր մրցումի (տեղին է յիշեցնել, որ 2001-ին իւրաքանչիւր կիսախաղ կը խաղցուէր 45 վայրկեան, 2009-էն ետք խաղարկութեան ժամանակը կը ճշտուեցաւ 35 վայրկեանի, ինչ որ իր դերը ունեցաւ կոյերու թիւի նուազումին մէջ):

2001-ին որեւէ մրցում առանց կոլի չաւարտեցաւ: 2009-ին, մրցում մը միայն աւարտեցաւ սպիտակ հաւասարութեամբ, իսկ այս մարզախաղերուն չորս մրցում աւարտեցաւ առանց կոլի, իսկ երկու մրցում ալ՝ 1-1 արդիւնքով: Այսպէս, 24 մրցումէ 6-ը աւարտեցան



հաւասարութեամբ: Ամէնէն կոլառատ մրցումը եղաւ Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու ճակատումը, որուն ընթացքին նշանակուեցաւ 6 կոլ (5-1):

Հարաւային Ամերիկա եւ Արեւելեան Մ. Նահանգներ մարզախաղերուն հրաժեշտ տուին մէկական կոյեր նշանակելով: Առաւելագոյն թիւով կոյերը նշանակեց Արեւմտեան Մ. Նահանգները (20 կոլ), մէկ կոլով գերազանցելով Լիբանանը (19 կոլ):

Ախոյեանութեան կոլ-սքորըը հանդիսացաւ Արեւմտեան Մ. Նահանգներէն Ռոպէրթ Մարտիրոսեան՝ 8 կոլով: 2009-ի մարզախաղերուն կոլ-սքորըը

հանդիսացած էր դարձեալ Արեւմտեան Մ. Նահանգներէն Թադէ Միրզայեան (5 կոլ): Ռոպէրթ եւ Թադէ բաւական հեռու են Յակոբ Տէր Պողոսեանի արձանագրած մրցանիշէն: Սուրիոյ շրջանէն Յակոբ Տէր Պողոսեան 2001-ի համա-Հ.Մ.Ը.Մ.-ական մարզախաղերուն նշանակած էր 12 կոլ, ինչ որ ցարդ կը մնայ անգերազանցելի:

Ուշագրաւ է նշել, որ ախոյեանութեան 24 մրցումներու ընթացքին արձանագրուեցան 5 կարմիր եւ 60 դեղին քարթեր: Նուազագոյն քարթերը ստացան Լիբանան (3 դեղին քարթ) եւ Արեւելեան Մ. Նահանգներ (1 կարմիր, 2 դեղին քարթ): Առաւելագոյն թիւով քարթերը ստացաւ Արեւմտեան Մ. Նահանգներ (1 կարմիր, 14 դեղին):

